

ԲԱՆԱԼՈՐԻ ՅԵՎ ԿՈԼԻՈԶՆԻԿԻ  
ԳՐԱԿԱՆ-ԳԵ  
ԴԱՐՎԵՍՏԱԿԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ

Գ

Ա. Պ. ԶԵԽՈՎ



ՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՈՒՍՈՒՑԻՉՀԱԾ

891-71  
9-34

ԱԶՈՎ-ՍԵՎ-ՆՈՎ-ՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ - 1936

ԲԱՆԿՈՐԻ ՅԵՎ ԿՈԼԵՈԶՆԻԿԻ  
ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐԳԵՍԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

19 NOV 2010

891:71

19-34

Ա. Պ. ԶԵԽՈՎ

05 FEB 2007

891.21-3

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԽՍՈՒՑԻՉԸ

Ա. Մ. Լինենի

ՔԱՅԱԿԱՆԻԱՅԻ-ԿԵՄԱԳՐԱԿԱՆ ԱԺԵՐԿԱՎ

Թարգմ. ՇՎԱՐԴ



ԱՀԱԳ-ԱՆՎԾՈՎՀԱՆ ՅԵՐԿՐԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
Ո.Ո.Ս.Զ.Պ. - Դ.Պ. - 1936


16.07.2013

12644

TOE 83128



Կ 3 260-63



Ա. Մ. ԼԻՆԻՆ

## Ա. Պ. ԶԵԽՈՎ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՌՉԵՐԿ)

Անտոն Պավլովիչ Զեխովը ծորակ թռու եր և մանր գաճառականի վորդի, վորը ծնվել է 1860 թ. հունվարի 29 ին (16) Տագանրովում — վորդիկ նավահանգստային քաղաքում Սպովի ծովի տվին: Զեխովի ընտանիքը սովորական մեշշանական բնուանիքներից եր, վորի շահների մեջ պակաս դեր չելին խաղում դրամական հաշիվներ և կրօնը:

Անտոն Պավլովիչն իր հանկության և զիմնադիմական տարիներն անցկացրեց Տագանրովում: Այստեղ առաջ առ անդամ նրա մեջ արթնացավ հետաքրքրությունը գեպի գրականությունն ու մատրոնը: Բաղադրի ու նրա առանձին տեղերի, բնակիչների, քաղքենիների, տունաբականների, ուսուցիչների, չինովնիկների կյանքի տպագործություններն են, վոր հետազում նյութ են ծառայել Զեխովին՝ նրա մի շարք գրվածքների համար:

Յերբ Զեխովը գեղ զիմնադիմումն եր, նրանց ընտանիքը տեղափխվեց Մոսկվա, վորովհետև Տագանրովում նրա հոր վաճառականական գործերը վատացան: Անտոն Պավլովիչը յերեք տարի շարունակ մենակ մնաց Տագանրովում, և մասնավոր դասերով եր իր համար միջոցներ հայթայթում:

1879 թվի աշնանը Զեխովը գնաց Մոսկվա և մտավ համալսարան, բժշկական ֆակուլտետի: Այդ ժամանակից սկզբան նա պետք է ոգներ նաև պմբողջ ընտանիքին, վորովդետեկն նրա հայրը բոլորովին սնանկացել եր:

Դեռ ուսանողական նստարանից Զեխովը սկսեց մասնակցել զանազան յերգիծաբանական ժուրնալներում: Անցյալ դարի ութսունական թվականները քաղաքական ծանր ճնշումների, ռեակցիայի, արտասովոր իսիսա դրաքննական հաւածանքների շրջան եյին: Այդ տարիներում յերգիծաբանական ժուրնալները («Բուղինիկ», «Բակուլիկ», «Ստրեկովա» և այլն) գնումեյին մանր հումորի (յերգիծանք) անտառմ ծաղրանկարների ուղիով, խուսափելով քաղաքական և հասարակական սատիրայից (յերգիծանքից), ձգտելով միայն զվարճացնել ընթերցողին նկարներով:

Բայց Անտոն Պավլովիչն իր գրական գործունեյության հենց առաջին քայլերից վարժվում եր աչալուրջ առորյա դիտողության: Նա դիտում եր կենցաղային ամենափոքր դժերը: Արդեն այդ տարիներումնա առանձին պատմվածքներում շշագում ե կարեռ հռգեբանական, սոցիալական նյութեր և տալիս ե բացասական գնահ ստում ամբողջ անցյալի կեղծ, ինքնահավան, ստրկամիտ մեշանականությանը (քաղքենիությանը): Մ. Գորկու ասելով, Զեխովը «արդեն իր առաջին պատմվածքներով կարողացավ ստորության խավար ծովում յերեան: Հանել նրա վողբերգական մուայլ կատակերը»:

Արդեն այն տիպերում, վորոնք ստեղծել եր «սկզբնական» Զեխովը, պարզ նկատվում եյին ընդհանուրացման մեծ ռեալիստական ձիրքը և վրդովմունքի ջերմ զգացումը դեպի սուսական ստոր ու զաղիք քաղքենիությունն իր զզվերի, քծնող, սարկական վոգով: Բավական և նշել, վոր 80-ական թվա-

կաններում Զեխովը գրեց «Զինովիկի մահը» (1883), «Քամելիոն» (1884 թ.), «Ունտեր Պրիշիբեկ» (1885):

1885 թվից Զեխովը տպագրվում է «Պետերբուրգի լրագիր») տարածված թերթում, իսկ 1886 թ. լույս տեսած Զեխովի «Խայտարդետ պատմը վածքներ» գրքույին առաջ ե բերում մեծ բարեկամական քննադատական զրականություն Զեխովի նկատմամբ:

«Նովոյե վրեմյա» («Նոր ժամանակ») հետազեմ թերթի հրատարակիչ՝ Սուվորինի հետ ունեցած ծանոթությունը հնարավորություն ե տալիս Զեխովին մասնակցել այդ մեծ թիրթում: «Նովոյե վրեմյայում» աշխատելու առաջին տարիներում (1886—87թ.) Զեխովը տպագրում է ռեալիստական-կենցաղային պատմվածքներ՝ հոգեբանական սուր վերլուծումով: Այս պատմվածքները գրավում են Դ. Գրիգորովիչի, Ա. Պետչենկի, Վ. Կորունկոյի և ուրիշ գրողների ուշազրությունը:

Զեխովի գրվածքներն առաջին անգամ բեմադրվում են 1887 թվին: Դրանից առաջ Զեխովը շատ անգամ ձեռնարկել ե թատերական գրվածքների, բայց նրա սկզբնական թատերական գրվածքները մնում եյին իբրև ձեռագրեր, իսկ «Մեծ ճամփի վրա» (1885) մի գործողությամբ պիեսը ցենզուրն արգելում ե: 1887 թվին նա հանդես է գալիս «Իվանով» սոցիալական մեծ դրամայով:

Իննառունական թվականներն իրենց հասարակական աշխուժությամբ, հեղափոխական աճող տրամադրությամբ և բանվորական շաբժման աճումով աշխատացնում եյին սոցիալական մթնոլորտը, և Զեխովը, վորագես զգաստ արվեստագետ, չեր կարող այդ բանը չպատկերացնել:

Զեխովի մեջ զարթնում են նոր հայացքներ: «Ով վոչինչ չի ուզում, վոչ մի բանի հույս չունի, — ասում ե նա: —

Նա չի կարող գեղարվեստագետ լինելու։ Նա կառկածում եր «փոքր գործերի» և տոլստոյական չչարին չհակառակելու» տեսության փրկողականության վրա («Մեզոնինով տունը», «Իմ կյանքը»), Նա գործոն մասնակցություն և ցույց տալիս հասարակական կյանքին, սովոր և խողեր այի դեմ յեղած պայքարին, ընդհանուր ժողովրդական մարդահամարին (1897 թ.), դպրոցների օննաշաբության, ճանապարհների բարելավման գործին։ 1890 թ. Նա ճանապարհորդում և Սալիմին կողին, ուսումնասիրելով այնտեղ աքսորյալների կյանքը և գրում ե մի գիրք, վորը մերկացնում և ցարական «արդարագագառության» դաժան մեթոդները։ 1898 թ. Դրեյֆուսի գործի աւելնչությամբ Թրանսիայում (Դրեյֆուսը ֆրանսիական հրյասպայեր, վորը մեղաղրպեց պետական դավաճանության համար և աքսորվեց), և այդ գործի առթիվ «Նովոյե վանմյա» թերթի կելտոտ հակասեմիտական դիրքի պատճառով Զեխովը խողում և Սուվորինի հետ իր կապերը։ Նա իր դրվածքներն ավելի ուրախությամբ տպագրում է լիրերալ թերթերում, «Ռուսակին վեղումոստի» («Ռուսական տեղեկադիր») թերթում, «Ռուսսկայա միսլ» («Ռուսական միտք») ամսաթերթում և այլն։

Այս տարիներում Զեխովը ստեղծագործում է մի շարք ըստ իր քաղաքական և սոցիալական-հոգեբանական իմաստով խորը, ռեալական գրվածքներ («Ն 6 վրանը», «Ռոտշիլդի ջութակը», «Մեզոնինով տունը», «Մի դեպք պրակտիկայից», «Մուժիկներ», «Գրականության ռւսուցիչը», «Իոնիչը» և այլն)։ 1894 թ. «Ռուսսկին վեղումոստի» թերթում լույս ե տեսնում «Թրականության ռւսուցիչը», 1898 թ. «Ռուսակայա միսլ» ամսաթերթում տպվում և «Պատյանի միջի մարդը», 1899 թ. «Սեմյան ամսաթերթում — «Հոգյակո» պատմեքածքը»։

Թոքախտի դեմ պայքարը (վորի նշանները հայտնվեցին դեռ 1886 թվին), Զեխովին ստիպում ե հաճախ փոխել իր բնակվայրը։ 1892 թվից նա ապրում է Սերպուխովի գովառի Սելիխովո ազարակում։ 1898 թվից մշտական ապրում է համար տեղափոխվում և Յալտա։ 1900 թվին Զեխովին ընտրում են գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամ, իսկ 1902 թվին նա հրաժարվում է այդ կոչումից՝ յերբ Մաքսիմ Փորկին, նույնպես ընտրված լինելով պատվավոր ակադեմիկոս, ցարի հատուկ հրամանով զրկվեց այդ կոչումից՝ հեղափոխական շարժման մեջ մասնակցություն ունենալու համար։

900-ական թվականներին Զեխովը ստեղծում է զարմանալի ռեալիստական ուժի և բոցավառ գրվածքներ՝ «Զորակում» պատմվածքը և «Բալենու պարտեղը» պիեսը։

Զեխովի կյանքի վերջին տարիները սերտ կապված են թատրոնի համար տարվա նրա աշխատանքներինետ։ Նրա «Վորոբյներ» (Կայք) պիեսի (1898 թ.) մեծ հաջողությունն առիթ է տալիս Զեխովին ստեղծել նոր պիեսներ՝ «Յերեք քույր» (բեմադրվել է Մոսկվայի գեղարվեստական թատրոնում 1901 թ.) և «Բալենու պարտեղը»։ «Բալենու պարտեղի» առաջին ներկայացումը (1904 թվի հունվարի 39-ին) զուգադիպվում է նրա գրական գործունեյության 25 ամյա հոբելյանին, և հանդիսանում է զրոյի համար լիակատար մի հաղթանակ։

900-ական թվականներին Զեխովի գրական աշխատանքն ընթանում է շատ ծանր պայմաններում։ հետզետե վատացող առողջությունը թույլ չեր աւլիս լիովին տարվել ստեղծագործական զործունեյությամբ։ 1904 թվի գարնանը նրա առողջությունը դառնում է կատասրողիկ Բժիշկների լար և ուժիներով Զեխովը բժշկվում եր Բագենվեյլերի (Գերմանիա-

յում) կուրորտում, վորտեղ և մահացավ 1904 թվի հուլիսի 15-ին:

Զեխովի մեծությունը, վորպես արվեստագետ՝ շատ բարձր եւ Հակիմ, սեղմ, տպափորիչ ձևով Զեխովը կարողանում եր նկարագրել սոցիալական նշանակություն ունեցող ամենաբարդ պատկերներ և յերեսութներ, Նովիների<sup>1</sup> մեծագույն վարպետ, մի շարք նշանագոր պատմվածքների հեղինակ, նուրբ հոգեբան, ստեղծելով իր առանձին վոճը նաև թատերագրության մեջ, նա տալիս ե իր կյանքի ճշշգրիտ և փայլուն նկարագիրը, մի նկարագիրը, վորը տողորված ե կյանքի խորը ճանաչողությամբ և հասկացողությամբ:

Զեխովի լեզուն նույնքան հարադատ ե, սեղմ և արտահայտիչ, վորքան և թեթև, գեղեցիկ և յերաժշտական ե: «Իրեւ վոճաբան, Զեխովը անհասանելի յե, — զբում եր նրա մասին Մ. Գորկին, — և գրականության ապագա պատմաբանը, խոսելով ոռուաց լեզվի աճման մասին՝ կասի, վոր այդ լեզուն ստեղծել են Պուշկինը, Տուրգենեվը և Զեխովը»:

Սակայն Զեխովի նշանակությունը չի սպառվում բացառապես գրական արժանիքներով:

Ենք գիտենք, վոր Զեխովն իր հայացքներով մարքսիստ չեր, նա սահմանափակված եր լիբերալ և բուրժվական-գենոկրատական շրջաններով: Նա այնքան պարզ չեր հասկանում, վոր կոպտության, տգիտության և վայրենության (վ. որնք նրան միշտ վրառում եյին) պատճառը գտնվում ե մասնավոր սեփականատիրության, կապիտալիստական սիստեմի հիմքերում:

Բայց մեզ համար շատ նշանակալի և արժեքավոր ե, վոր սոցիալական մեծ զգաստության և բացառիկ ուսալիստական

ձիրքի ուժով, նա հաճախ բարձրանում եր միջավայրից վերև: Նա կարողացավ հասկանալ գոեհկության նշանակությունը և նկարագրել այն, իրբու ցարական Ռուսաստանի շահագործող գասակարգի ամենազդիկ կողմերի արտահայտություն, իրբու նրանց գաղափարական և բարոյական վողորմելիության արտահայտություն: Ահա այդ Զեխովը, ճորտատիրության թշնամի, նրա զաժանության, քաղքենիական քարացածության թշնամի: Զեխովը, ամեն աեսակ հոգեկան ճնացածության ու բթության դեմ պայքարող Զեխովը, քաղքենիական յերեսաշատությունն ու տգիտությունն արմանախիլ անող Զեխովը, վորը սաստիկ ատում եր բյուրոկրատական ցարական ուժիմը և ամբողջ հոգով ձգտում եր զեպի ապագա գեղեցիկ և հիանալի կյանքը, այդ Զեխովը մեր սերտ և ուժեղ դաշնակիցն ե:

Իր, կարծես թե մեղմ տոնով գրված պատմվածքներով, վորոնք մերկացնում են քաղքենիական կյանքի զգիկությունը և ունայնությունը, Զեխովն ահագին ներգործություն ե անում մեզ վրա: Նա ոգնում է հասկանալ մեզ մոտ քաղքենիականության մնացորդները և պայքարել նրանց գեմ: «Զեխովը, — զբում եր Ա. Վ. Լունաչարսկին — աշխատեց և մեռավ այլ պայմաններում (քան մենք), բայց և այնպես նա հաճախ հարվածում եր այն հիգրաների (ճիշգաղների) զիսին, վորոնք գեռես շրջապատում են մեզ»: Զեխովի ծաղրանքը և՛ այսոր, խորհրդային պայմաններում, հարվածում ե կապիտալիզմի խղճուկ մնացորդները, այն կապիտալիզմի, վորը չախչախված ե, ավերված, բայց վերջնականապես չի վոչնչացված:

Զեխովը ան պատկերներն իրենց գունեղ գեղարվեստականությամբ, տիպիկությամբ և ուսալիզմով հսկայական ներգործական ուժ են պարունակում իրենց մեջ:

<sup>1</sup> Նովիկ — համառոտ պատմվածք.

Ահա թե ինչու կոմունիզմին թշնամի մարդկանց ու յերեսոյթների ղեմ մղվող պայքարում, Վ. Ի. Լենինը և Ի. Վ. Ստալինը շատ անգամ դիմել են Զեխովի գեղարվեստական պատկերներին, վարպետորեն ոգտագործելով նրանք հեղափոխական պայքարում:

Չեխովի պատկերների ոգտագործման նշանավոր փաստը մենք գտնում ենք «Բոյկոտի ղեմ» վերնազբո՞յ հոդվածում, վարաեղ լինչնը գնահատելով մենշևիկների տակտիկան 1905 թվի հեղափոխության ընթացքում, համարում է Զեխովի յերգիծական յերկու հերոսների հատկանիշներ — Իպոլիտ Իպոլիտառիչնը «Գրականության ուսուցիչ» պատմվածքից և Բելիկովինը «Պատյանի սիջի մարդը» պատմվածքից:

«Մենչեւկյան ամբողջ գրականության, հատկապես 1905 թվի գրականության (մինչև հոկտեմբերը) միջավ, կարմիր թելի պես անցնում ե բոլշևիկներին «ուղղագծության» մեջ մեղաղբելը, խրատը նրանց հասցեյին այն մասին, վոր պիտք ե հաշվի առնել վոլորտապտույտ այն ողին, վորով ընթառում ե պատմությունը: Մենշևիկյան գրականության այս գիծը նույնպես նմուշ ե այն գատողության, թե ձիերը վարսակ են ուտում ե թե վոլգան հոսում ե կասպից ծովը, — մի գատողություն, վորը ծամճմելով անվիճելին, մթնեցնում ե այն բանի եյությունը, ինչ վոր վիճելի յեւ Վոր պատմությունը սովորաբար ընթառում ե վոլորտապտույտ ուղիով, և վոր մարքսիստը սովորաբար պետք ե կարողանա հաշվի առնել պատմության ամենախճճված, քմահաճ զիզզագները, — դա անվիճելի յեւ: Բայց այդ անվիճելի ծամոնը յերբեք չի վերաբերում այն հարցին, թե ինչ պիտի անի մարքսիստը, յերբ նույն այդ պատմությունը պայքարող ուժերի առաջ գնում ե ուղիղ կամ վոլորտապտույտ ճանապարհի ընթրության հարցի լուծումը: Այդպիսի մոմենտներին կամ այդ-

պիսի շրջաններին, յերբ այդ բանը կատարվում ե, պատմության սովորական վոլորտապտույտի մասին թեթև դատողություն անելով պրծնել՝ իսկապես վոր նշանակում է դառնալ պատյանի միջի մարդ և խորանալ այն ճշմարտության մեջ, թե ձիերը վարակ են ուտում»<sup>1</sup>:

«Վոչ վոր այնպես պարզ և նուրբ կերպով չեր հասկանում ի յանքի մանրունքների վողբերգությունը, ինչպես Անտոն Չեխովը, — ասում եր Մաքսիմ Գորկին, — վոչ վոք նրանից առաջ չեր կարողացել այնպես անխնա, ճշմարիտ կերպով նկարել մարդկանց՝ նրանց կյանքի անարդ և տխուր պատկերը քաղցենիական տափակ կյանքի խավարքասում: Նրա թշնամին հանդիսանում եր գոենկությունը, նա ամբողջ կյանքում պայքարում եր նրա ղեմ, ծաղրում եր նրան, նրան եր նկարագրում նա իր անաշառ, սուր գրչով կարողանալով գոենկության բորբոս գտնել նույնիսկ այնտեղ, վորտեղ առաջին հայացքից, թվում եր, թե ամեն ինչ շատ լավ ե, հարմար ե, սարքված, ու մինչև անգամ փայլուն ե... Յեվ զրա համար գոենկությունը նրանից վրեժ առավ մի զգվելի վարմունքով. Նրա գիտակը — բանաստեղծի դիակը — ուստրեներ փոխագրող վագոնի մեջ տեղավորելով»<sup>2</sup>:

Հասկանալի յե նոր սոցիալիստական աշխարհ կառուցող ների սերը ղեպի այդպիսի գրողը: Ա. Պ. Չեխովի ծննդյան 75 ամյակն այս տարի խորհուրդների յերկրում փոխվեց մի իսկապես ժողովրդական առնի: Գործարաններն ու կոլխացները նշում եյին հոբելյանը, բարձրածայն ընթերցելով գրողի աշխատությունները, կաղաքերպելով գեղարվեստական ցուցահանդեսներ, գրական յերեկույթներ կուլտուրայի և հանգստի պարկերում: Չեխովյան որերը հատկապես ջերմ

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Յերկերի ժողովածու, 12 հատոր, եջ 21

<sup>2</sup> Մ Գորկի, Յերկերի ժողովածու, հատոր 22, եջ 41.

Կերպով տոնվեցին գրողի հայրենիքում — Տագանրոդում: Նոր սոցիալիստական Տագանրոդը ծաղիկներով գիմավորեց տոնաշխմբությանը ներկա լինելու համար ժամանած՝ կուսակցության Յերկրումի քարառուղարներ՝ ընկ. ընկ. Բ. Պ. Շեքոլդակին, Մ. Մ. Մալինովին, հանրապետության ժողովրդական արտիստներ Ո. Լ. Կնիպակեր-Չեխովային (գրողի կնոջը), Ի. Մ. Մոսկվինին, արվեստների վաստակավոր գործիչ Ա. Լ. Վիշնեվսկուն, վաստակավոր արտիստներ Խմելյովին, Տարասովին, Յերշովին, Վերբիցկուն, Տելեզովին, Որլովին, գրողներ Լ. Նիկոլինին, Վալենտին Կատակային:

Մարդկանք վորոնք կառուցում են հրաշալի մի կյանք, կարողանում են գնաճատել մեծ գրողին, վորն ընդմիշտ դատապարտել և խայտառակ անցյալը<sup>1</sup>:

Ա. Պ. ԶԵԽՈՎ

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑԻՉԸ

1. Հանձնարարում ենք ընթերցողին ծանոթանալ ՀԿԿ (թ) Տագանրոդի քաղկոմի քարտուղար Ա. Վարդանյանի հիանալի հասին, արտասահմանական տոնախմբություններին — Տագանրոդում — Չեխովի հետ ընդդեմ շնորհականության (հրատարակված ե մեր հրատարակչության կողմից 1935 թ. հունիսին, զինը 25 կոպեկ):

## I.

Լսվեց ձիու սմբակների հարգածը գերանե հատակին։  
ախոռից դուրս բերին սկզբում սեվաթույր «Դրաֆ Նուլինին»,  
հետո սպիտակ «Վելիկանին», հետո նրա քույր «Մայկա-  
յին»։ Այդ բոլորը գերազանց և թանգարժեք ձիեր եյին։  
Ծերունի Շելեստովը թամրեց «Վելիկանին» և դառնալով եր  
աղջիկ Մաշային ասաց։

Դեհ, Մարի Գողֆրուա, յեկ նստիր, այստեղ՝

Մաշա Շելեստովան ընտանիքում ամենակրտսերն ելու Նա  
18 տարեկան եր, բայց ընտանիքում դեռ չեյին վարժվել  
նրան համարի մեծ, զբա համար ել բոլորը նրան կոչում  
եին Մանյա և Մանյուսյա. իսկ յերբ քաղաքում յեկավ  
ցիրկը, ուր Մաշան ջանասիրությամբ հաճախսմ եր, բոլորը  
նրան սկսեցին կոչել Մարիա «Գողֆրուա»։

— Հնալ, — բացականչեց նա նոտելով «Վելիկանին» վրա։

Նրա քույր Վասյան նստեց «Մայկայի» վրա, Նիկե-  
տինը — «Դրաֆ Նուլինի» վրա, ոփիցերներն — իրենց ձիերի  
վրա և յերկար, զեղեցիկ ձիախումրը զարդարված ոփիցերա-  
կան յերկար կիտեներով (վերնազգեստով) և սեղ ամազոն-  
կաներով<sup>1</sup>, քայլերով հեռացավ բակից։

<sup>1</sup> Ամազոնկա — հեծվոր կնոջ հատուկ շոր եւ

Նիկիտինը նկատեց, վոր յերբ նստեցին ձիերը և հետո փողոց գուրս յեկան, չգիտես ի՞նչու Մանյուսյան միայն նրա վրա յեր ուշադրություն դարձնում: Նա հոգացողությամբ նայում իր Նիկիտինին և «Գրաֆ Նուլինին» ու ասում:

→ Դուք, Սերգեյ Վասիլյեվիչ, շարունակ պահեցեք նրա սանձը, աշխատեցեք, վոր նա չվախենա, նա ձեվանում եւ:

Արդյոք նրանից եր, վոր Մանյայի «Վելիկանը» մեծ բարեկամ եր «Գրաֆ Նուլինին», թե՛ պատահաբար եր լինում, նաև ինչպես յերեկ և մյուս որը, շարունակ գնում եր Նիկիտինի կողքով: Իսկ Նիկիտինը նայում եր նրա փոքրիկ վայելչակազմ մարմնին, վորը նստած իր սպիտակ հպարտ կենդանու վրա, դիտում իր նրա նուրբ պլրոֆիլը (դիմակեսը), նրա ցիլինդրը, վորը յերբեք չեր սազում նրան և ավելի հասակավոր եր ցույց տալիս, — նայում եր ուրախությամբ, քնքությամբ, հիացմունքով, լսում եր նրան, բայց քիչ եր հասկանում ու մտածում.

«Ազնիվ խոսք եմ տալիս, յերդում եմ աստծով, վոր չեմ վախենալու և հենց այսոր բացատրվելու յեմ նրա հետ»...

Յերեկոյան ժամի յոթն եր, այնպիսի մի ժամանակ, յերբ սպիտակ ակացիան և շեփորուկն այնպես ուժիղ են բուրում, վոր կարծես թե ողը և իրենք ծառերը թմրում են իրենց բուրմունքից: Քաղաքային այգում արգեն նվազում եր յերաժշտախումբը: Զիերն ուժեղ դոփում եյին սալահատակը, ամեն կողմից լսում եյին ծիծաղ, խոսակցություն և գոնակների թրիկոց: Հանդիպած զինվորները բարե եյին տալիս ոփիցերներին, դիմապիստները բարեկում եյին Նիկիտինին և յերեւում եր, վոր յերաժշտության համար այդի շատապող բույր զբոսնողների համար շատ հաճելի յեւ նայել ձիավորների խմբին: Իսկ ինչպես տաք և ինչպես գափուկ են թվում այն ամպերը, վորոնք անկանոն ցրված են յերկն-

քում, ինչպես հեզ ու դուրալի յեն բարդիների ու ակացիաների ստվերները, վորոնք ձգված են լայն փողոցով մեկ և զիմացի կողմում ընդգրկում են տները մինչև պատշգամբը ները և յերկրորդ հարկերը:

Դուքս յեկան քաղաքից և ձիերը քեցցին մեծ ճանապարհով: Այստեղ առղեն ակացիան և շեփորուկը չեյին բուրում, չեր լսվում յերաժշտությունը, բայց բուրում եր գաշուը, կանաչում երին մատաղ համարն ու ցորենը, ճտում եյին զաշտային մկները, կուա՛ռում երին կաչաղ կները: Ուր վոր նայես, ամեն ուրեք կանաչ ե, միայն տեղ-տեղ սկին եյին տալիս բոստանները և հեռուն, գեղի ձախ, գերեզմանատանն սպիտակին ե տալիս ծաղկաթափվող խնձորենիների շերտը:

Անցան սպանդանոցների մոտով, հետո գարեջրի գործարանի մոտով, անցան յերաժիշտ զինվորների բազմության կողքով, վորոնք շատապում յեն քաղաքամերձ այգին:

— Պոլյանսկու ձին շատ լավն ե, խոսք չկա, — ասում եր Մանյուսյան Նիկիտինին, աչքերով ցույց տա ով ոփիցերին, վորը գնում եր Վառյայի կողքով — Բայց նա անպետք է համարվում: Բոլորովին անտեղի յե նրա ձախ վոտքի այդ սպիտակ բիծը և նայեցեք, ինչպես վեր և ցցում գլուխը: Այժմ վոչ մի կերպ չի կարելի նրան հետ սովորեցնել, այդպես նա կցցի, մինչև վոր ստակի:

Մանյուսյան այնպիսի մոլեռանդ հեծվոր եր, ինչպես իր հայրը: Նա տանջվում եր, յերբ վորեկ մեկի մոտ տեսնում եր լավ ձի՝ և ուրախանում եր, յերբ ուրիշների ձիերի մոտ թերություններ եր նկատում: Իսկ Նիկիտինը ձիերից վոռչինչ չեր հասկանում, և նրա համար բօլորովին միհնույն եր պահել ձին սունձով թե յերախակալով, քշել չափ տալով. թե քառատրոփ. Նա միայն պատմեալ վարդարակ կիրակ ու գիրքն անբնական

եր, լարված, և դրա համար ոֆիցերները, վորոնք կարող են պահել իրենց թամբի վրա, պետք և Մանյուսյային ավելի դուր դան, քան ինքը։ Յեվ նա խանդում եր նրան դեպի ոֆիցերները։

Յերբ անցնում եյին քաղաքամերձ այգու մոտով, ինչ վոր մեկն առաջարկեց մտնել այգի և սելտերի ջուր խմել։ Մտան. այգում բուսած եյին միայն կաղնիներ, նրանք հենց նոր եյին սկսել բացվել այնպես վոր այժմ կանաչ սաղարթների միջով յերեւում եր ամբողջ այգին իր եստրադով (բեմով), սեղաններով, ճաճքերով, յերեւում եյին ագռավների բուրբ բները, վորոնք նման եյին մեծ զվարկների։ Հեծվորներն ու նրանց ուղեկից կանայք իշան սեղաններից մեկի մոտ և պահանջեցին սելտերի ջուր։ Նրանց մոտ սկսեցին գալ այցում զբոսնող ծանոթները։ Ի միջի այլոց մոտեցան զինվորական բժշկել բարձր կոշիկները հագին և յերաժշտականակարը, վորն սպասում եր իր յերաժիշտներին։ Յերեկ բժշկել նիկիտինին ընդունեց վորպես ուսանող, քանի վոր հարցրեց։

— Դուք բարեհաճել եք արձակուրդ գալ։

— Վոչ, յես մշտապես ապրում եմ այստեղ, — պատասխանեց Նիկիտինը։ — Յես դասատու յեմ զիմազիայում։

— Մեթե, — զարմացավ բժշկը, — Այդպես յերիտասարդ եք և արդեն ուսուցություն եք անում։

— Վորաեղից եմ յերիտասարդ, յես 26 տարեկան եմ... Փառք ասածու։

— Դուք թեև մորուք և բեղեր ունեք, բայց և այնպես վեմքով ձեզ չի կարելի 22—23 տարեկանից ավելի տալ։ Ինչքան դուք յերիտասարդ եք։

«Ինչ խողություն ե, — մտածեց Նիկիտինը։ — Դա յել և ինձ կաթնակեր համարում»։

Նրան բոլորովին դուր չեր գալիս, յերբ վորեւ մեկը խոսում եր իր յերիտասարդություն մասին, հատկապես կանանց կամ զիմազիատների ներկայությամբ։ Այս որից, յերբ նա յեկավ այդ քաղաքը և մտավ ծառայության, նա սկսեց ատել իր յերիտասարդությունը։ Գիմնազիատները նրանից չեյին վախենում, ծերերը մեծարուս եյին նրան յերիտասարդ կոչումով, կանայք ավելի հաճույքով եյին պարուս նրա հետ, քան թե լսում նրա յերկար դատողությունները։ Յեվ նա թանկ կվճարեր, այն բանի համար, յեթե այժմ տասը տարով մեծանարա։

Այգուց գնացին Շեկսպիրների Փերման։ Այլտեղ կանգ առան դարպասի մոտ, դուրս կանչեցին գործակատարի կնոջը — Պրասկովային և պահանջեցին թարմ կաթ։ Կաթը վոչ վոք չխմեց, բոլորն իրար նայեցին, ծիծաղեցին և հետ վերադառն։ Յերբ վերադառնում եյին, քաղաքամերձ այգում արդեն նվազում եր յերաժշտախումբը. արեւ պահվել եր զերեզմանի հետևում և յերկնքի կեսը կարմրել եր վերջաւույսից։

Մանյուսյան դարձյալ գնում եր Նիկիտինի կողքով։ Վերջինս ուղում եր խոսել այն մասին, թե ինչպես սաստիկ սիրում ե նրան, բայց վախենում եր, վոր ոֆիցերները և վայոյան լսեն նրան, և լսում եր։ Մանյուսյան նույնպես լուռ եր, և Նիկիտինն զգում եր, թե ինչու նա լուռ ե, և ինչու զնում ե իր կողքով, և նա այնպես բախտավոր եր, վոր յերկիրը, յերկինքը, քաղաքի կրակները, գարեջրի գործարանի սեստվերանկարը — այդ բոլորը ձուլվում եյին նրա աչքերում վորպես մի լավ և քնքուշ բան և նրան թվառ եր, վոր իր «Գրաֆ Նուլինը» սլանում ե ոդում և ուղում ե մազլցել դեպի շառագույն յերկինքը։

Յեկան տուն։ Այգում, սեղանի վրա արդեն յեռում

իր ինքնայիռը։ Սեղանի մի ծայրին իր բարեկամների, շըր-  
ջանային զատարանի պաշտոնյաների հետ նստել եր ծե-  
րունի Շելխտովը և իր սովորության համաձայն ինչ վոր  
քննադատում եր։

— Դա գոեհկություն ե, — ասում եր նա, — գոեհկություն  
ե, ուրիշ գոչինչ։ Այս, գոեհկություն։

Այն ժամանակից, յերբ Նիկիտինը սիրահարվեց Մանյուս-  
յայի վրա, Շելխտովինը ամեն ինչը նրան դուր եր գտ-  
իւմ տունը, տնամերձ այդին, յերեկոյան թեյը, Հյուսված  
աթոռները, պառավ դայակը, և նույնիսկ «գոեհկություն»  
բառը, վորը ծերունին սիրում իր հաճախ արտասանել-  
նրան դուր չեր գալիս միայն շների և կատուների առատու-  
թյունը, նաև յեզիպտական աղավնիները, վորոնք տխուր  
հեծում եյին դարավանդի մեծ վանդակում։ Բակի և բնա-  
կարանների շներն այնքան շատ եյն, վոր Շելխտովինը  
հետ ունեցած ծանոթության ամբողջ ժամանակամիջոցում  
նա սովորեց ճանաչել միայն յերկուսին՝ Մուշկային և Սո-  
մին։ Մուշկան փոքր եր, մազաթափ մի շնիկ, բրդոտ դնչով,  
չար և յերես տված։ Նա ատում եր Նիկիտինին։ տեսնելով  
նրան, նա ամեն անդամ գլուխը թեքում եր, ատամները բաց  
անում և սկսում «ո՛ ո ո ո... հաֆ հաֆ հաֆ... ո ո ո...»,  
հետո նստում եր աթոռի տակ։ Իսկ յերբ Նիկիտինը փոր-  
ձում եր քշել նրան իր աթոռի տակից, նա սկսում եր սրտ-  
այն հաջել իսկ տերերն ատում եյին։

— Միք վախենա, նա չի կծում։ Նա բարի յեւ

իսկ Սոմը մի ահազին սև շուն եր յերկար վոտներով ու  
պոչով վորը կոշտ եր, ինչպես ձեռնափայտ։ Ճաշին և թեյի  
ժամանակ նա սովորաբար լուռ ման եր գալիս սեղանի տակ  
և պոչը խոսում եր կոշիկներին ու սեղանի վոտներին։ Դա  
մի բարի, հիմար շուն եր, բայց վոչինը նիկիտինը տանել չեր կա-

ըող նրա համար, վոր նա սովորություն ուներ իր գունչը  
գնել ճաշողների ճնկներին և թքով կեղտոտել շալվարները։  
Նիկիտինը շատ անգամ փորձում եր խփել նրա ճակատին  
գանուկի կոթով, հարվածում եր քթին, հայհոյում եր, գան-  
գատվում, բայց վոչ մի բան չեր փրկում նրա շալվարը  
քծերից։

Զիով ման գալուց հետո թեյը, մուրաբան, պաքսի-  
մաթը և կարազը շատ համեղ եյին թվում Առաջին բաժակը  
բոլորը խմեցին մեծ ախորժակով և լուռ, իսկ յերկորդը բա-  
ժակից առաջ սկսեցին վիճել Թեյի և ճաշի ժամանակ վեճը  
միշտ սկսում եր Վասյան։ Նա արդեն 23 տարեկան եր, լա-  
վիկն եր, Մանյուսյայից ավելի գեղեցիկ, տան մեջ համար-  
վում եր ամենախելացին և կրթվածը և իրեն պահում եր դիբ-  
քով, խիստ, ինչպես դա վայել եր մեծ աղջկանը, վորը տան  
մեջ բռնում եր հանգույցալ մոր տեղը։ Տան տիրունու իրա-  
վունքներով հյուրերի ներկայությամբ նա ման եր գալիս  
բլուզը հազին, փիցերների ազգանուներն եր տալիս, Ման-  
յուսյայի վրա նայում եր վորպես փոքրիկ աղջկա և  
նրա հետ խոսում եր դաստիարակչունու տոնով (յեղանակով)։  
Նա իրեն համարում եր պառաված աղջիկ — նշանակում եր,  
համոզված եր, վոր կամուսնանա։

Ամեն մի խոսակցություն, նույն իսկ յեղանակի մասին,  
նա անպայման դարձնում եր վեճ։

Նա ինչ վոր մալեռանդություն ուներ՝ բռնել բոլորին  
նրանց խոսքերից, հայտաբերել նրանց հակասությունը,  
խոսքերի հետեւից ընկնել։ Դուք սկսում եք նրա հետ վորեվե  
մի բանի մասին խոսել իսկ նա արդեն ուշադրությամբ նա-  
յում և ձեր գեմքին և հանկարծ ընդհատում։ «Թույլ տվեք,  
թույլ տվեք, Պետրով, յերեք որ առաջ դուք բոլորվին հա-  
կառակն եյիք ասում»։ Կամ թե հեգնորեն ժպտում եւ և

ասում. «Սակայն յես նկատում եմ, վոր դուք սկսում եք քառողիլ Յերրորդ բաժնի\* սկզբունքները, Շնորհավորում եմ ձեզ»:

Յեթե դուք սրախոսություն արիք կամ բառախաղություն, դուք խկույն լսում եք նրա ձայնը. «Իս հին բան ե» կամ. «Դա տափակություն ե»: Իսկ յեթե սրախոսում ե ոփեցերը, ապա նա արհամարանքով ծամածում ե դեմքը և ասում. «Բ-բ-բանակային սրախոսություն ե»:

Յեկ այդ «բ-բ-բ-ն» այնպիս ներշնչող եր, վոր Մուշկան սեղանի տակից անպայման նրան պատախանում եր՝ «ո ո ո... հաֆ-հաֆ-հաֆ...»: Այժմ թեյի ժամանակ վեճն սկզբց նրանից, վոր Նիկիտինը խոսեց գիմնազիայի քննությունների մասին:

— Թույլ տվեք, Սերգեյ Վասիլյեվիչ, — ընդհատեց նրան Վառյան, — դուք ասում եք, վոր աշակերտների համար դժվար ե: Իս ո՞վ ե հանցավոր, թույլ տվեք հարցնել ձեզ: Որինակ, ութերորդ դասարանի աշակերտներին դուք շարադրություն եք տվել հետևյալ նյութը — «Պուշկինը վորպես հոգ գերան»: Նախ և առաջ չի կարելի տալ այդպիսի դժվար նյութեր, իսկ յերկրորդ, ի՞նչ հոգերան ե Պուշկինը: Դեռ, Շչեդրինը կամ Դոստոյեվսկին ուրիշ բան են, իսկ Պուշկինը մեծ բանաստեղծ ե, և ուրիշ վոչինչ:

— Շչեդրինն իր համար, իսկ Պուշկինն իր համար, — մույլ պատասխանեց Նիկիտինը:

— Յես գիտեմ, ձեզ մոտ գիմնազիայում Շչեդրինին չեն

\* Ցարական գիլանատան Յերրորդ բաժնը հիմնել եր Նիկոլայ I թագավորը «Պալմինը», վորպես ցարիզմի բարձր դեկապար մարմին, վորը պայքարում եր հեղափոխական շարժման դեմ Ռուսաստանում: Յերրորդ բաժնը «Հաշտակիլ եր» իր բացառիկ սառությամբ, դաժանությամբ և ազիտությամբ:

ընդունում, սակայն բանն այդ չի: Բայց դուք ասեք, ի՞նչ հոգերան ե Պուշկինը:

— Հապա ի՞նչ, հոգերան չե, թույլ ավեք յես ձեզ որինակներ բերեմ:

Յեկ Նիկիտինը մի քանի հասկածներ արտասանեց Ռնեգինից, հետո թորիս Գոգունովից:

— Վոչ մի հոգերանություն չեմ տեսնում այդտեղ, — հառաչեց Վառյան: — Հոգերան համարվում ե նա, ով նկարագրում է մարդկանց հոգու ծալքերը, իսկ դրանք հիանալի վոտանավորներ են, ուրիշ վոչինչ:

— Յես գիտեմ, ինչպիսի հոգերանություն ե հարկավոր ձեզ, — վիրավորվեց Նիկիտինը: — Ձեզ պետք ե, վորպեսզի վորմե մեկը բութ սղոցով սղոցի իմ մատը և վորպեսզի յես ամբողջ կոկորդով բղավեմ՝ դա, ըստ ձեզ, հոգերանություն ե:

— Տափակ ե: Սակայն դուք համենայն դեպս չապացուցեցիք ինձ, թե ինչու Պուշկինը հոգերան ե:

Յերբ Նիկիտինն ստիպված եր վիճել այն մասին, ինչ վոր թվում եր նրան հին, նեղ կամ գրա նման մի բան, նա սովորաբար տեղից վեր եր ցատկում, յերկու ձեռքերով բռնում եր գլուխը և սկսում եր տնքոցով վազել անկյունից անկյուն: Յեկ այժմ անում եր նույն բանը. նա վեր թռավ, բռնեց իր գլուխը և տնքոցով անցավ սեղանի շուրջը և հետո նստեց հեռուն:

Նրան պաշտպանեցին ոՓիցերները: Շատաբս-կապիտան Պոլյանսկին սկսեց հավատացնել Վառյային, վոր Պուշկինը, իրոք, հոգերան ե, և վորպիս ապացույց մեջ բերեց 2 վատանավոր կերմոնտովից, Պարուչիկ Դերնեան ասաց, վարյեթե Պուշկինը հոգերան չիներ, նրան արձան չեյին կանոնեցնի Մուսկայում:

— Դա գոեհկություն եւ, — լսվեց սեղանի մյուս ծայրից: — Յես այդպես ել ասացի նահանգապետին: Ձերդ գերազանցություն, դա գոեհկություն եւ:

— Յես այլևս չեմ վիճի, — բղավեց Նիկիտինը: — Դրան վերջ չեմ լինի, բավական եւ ԱՌի, դեն կորի, կեղտուա շուն, — բղավեց նա Սոմի վրա, վորս իր գլուխն ու թաթը նրա ծնկին դրեց:

«Ռ ո ռ... հաֆ-հաֆ-հաֆ...», — լսվեց աթոռի տակից:

— Խոստավանեցեք, վոր գուք ճիշտ չեք, — բղավեց Վառյան: — Խոստովանեցեք.

Բայց հյուրերը — որիորդները յեկան և վեճն ինքն իրեն ընդհատվեց, Բոլորը մեկնեցին դահլիճ, Վառյան նստեց գուշնամուրի մոտ և սկսեց պարեր նվազել: Սկզբում պարեցին վալս, հետո պոլկա, հետո կադրիլ մեծ շրջանով, վորն անցկացրեց բոլոր սենյակներով շտաբս-կապիտան Պոլյանսկին, հետո նորից սկսեցին վալս պարել:

Ծերունիները պարի ժամանակ նստել եյին դահլիճում, ծխում եյին և նայում յերիտասարդության վրա: Նրանց միջն եր և Ծերալդինը, քաղաքային վարկային ընկերության զիբեկտորը, վորը հոչ ոկված եր իր սիրով դեպի գրականությունը և բեմական արվեստը: Նա հիմնել եր տեղական քյերաժշտաթօտերական խմբակը և ինքը մասն ոկցում եր ներկայացումներին՝ միշտ խաղալով ծիծաղաշարժ սպասավորների գերը կամ յերգաձայն կարդալով «Հանցավորուհին»: Քաղաքում նրան կոչում եյին մումիա (քարացած գիշեկ), վորովհետեւ նա բարձր եր, շատ նիհար, ջլուտ և նրա գեմքը միշտ հանդիսավոր եր, իսկ աղոտ աչքերն անշարժ եյին: Բեմական արվեստը և ասիրում եր այնպես անկեղծորեն, վոր նույնիսկ ածիլում եր իր բեղերն ու մորուքը, իսկ դա նրան ավելի ևս նմանեցնում եր մումիայի:

Մեծ շրջանը պարելուց հետո նա անվճռականորեն մի տեսակ կողքի մոտեցավ Նիկիտինին, հազար և ասաց:

— Յես բախտ ունեցա ներկա լինել վեճին թեյի ժամանակ, Միանգամայն համամիտ եմ ձեր կարծիքին: Մենք ձեզ հետ միասին համախոհներ ենք, և ինձ շատ հաճիլի կլեներ խոսել ձեզ հետ: Դուք բարեհաճել եք կարդալ կիսենդի<sup>1</sup> «Համբուրգյան դրամատուրգիան»:

— Վոչ, չեմ կարդացել:

Ծերալդինը սարսափեց և այնպես թափահարեց ձեռքերը, վոր կարծես թե այլեց իր մատները և վոչինչ չասելով հետ քաշվեց Նիկիտինի մոտից: Ծերալդինի մարմինը, նրա հարցը և զարմանքը Նիկիտինին թվացին ծիծաղաշարժ, բայց նա համենայն դեպս մտածեց:

«Իսկապես անհարմար եւ, Յես գրականության ուսուցիչ եմ և մինչև այսոր չեմ կարդացել Լեսինգին: Պետք է կարդալ»:

Ընթրիքից առաջ բոլորը, յերիտասարդներն ու ծերերը նստեցին թղթախաղի: Վերցը լին յերկու ձեռք թուղթ՝ մեկը բաժանեցին բոլորին հավասար, մյուսը դրին սեղանի վրա շուռ տված:

— Ում ձեռքին ե այս թուղթը, — սկսեց հանդիսավոր կերպով ծերունի Ծերալդինը, բարձրացնելով յերկորդ ձեռքի վերին թուղթը, — նա հիմա պետք ե գնա մանկասենյակը և համբուրե գայակին:

Դայակի հետ համբուրվելու բավականությունը վիճակ-վեց Ծերալդինին: Բոլորը խմբով շրջապատեցին նրան և տարան մանկասենյակը ու ծիծաղելով, ծափ տալով ստիպեցին համբուրվել գայակի հետ: բարձրացավ աղմուկ, իրարանցում...

<sup>1</sup> Գուաֆրիդ Եֆրամի Լեսինգը (1729—1781 թ.) գերմանական գրող և յերպական գրականության խոշորագույն ներկայացուցիչներից մեկը:

— Վոչ այնքան կրքոտ, — կանչեց Շելեստովը, արտաս-  
վելով ծիծաղից: — Վոչ այնքան կրքոտ:

Նիկիտինին վիճակվեց խոստովանեցնել բոլորին: Նա  
նստեց աթոռի վրա դահլիճի մեջ տեղում: Բերին շալը և  
ծածկեցին նրա գլուխը: Առաջինը մոտեցավ նրան խոստո-  
վանվելու վառյան:

— Յես գիտեմ ձեր մեղքերը: — սկսեց Նիկիտինը, մթու-  
թյան մեջ նայելով նրա խիստ դեմքին: — Ասացեք ինձ,  
որիորդ ի՞նչ առթիվ դուք ամեն որ զրունում եք Պոլյանսկու  
հետ: Ե՞ս: Չուր չե, զուր չե, վոր նա հուսարի հետ ե:

— Դա տափակ ե, — ասաց վառյան և հեռացավ:

Հետո շալի տակ փայլեցին մեծ անշարժ աչքերը, խա-  
վարի մեջ զծվեց հաճելի դեմքը և ինչ վոր բուրեց թանկա-  
փին, վաղուց ծանոթ բուրմունքով, վորը հիշեցնում եր Նի-  
կիտինին Մանյուսիայի սենյակը:

— Մարիա Գողփրուա, — ասաց նա և չձանաչեց իր ձայ-  
նը — այնպես նա մեղմ եր ու քնքուշ: Ի՞նչ մեղք ունեք:

Մանյուսյան կլոցեց աշքերը և ցույց տվեց լեզվի ծայրը,  
հետո ծիծաղեց ու հեռացավ, իսկ մի ըոպեյից հետո նա ար-  
դեն կանգնած եր դահլիճի միջում, ծափահարում եր և կան-  
չում:

— Ընթրել, ընթրել, ընթրել:

Ենթ բոլորն ընկան սեղանատուն:

Վառյան ընթրեքին նորից վիճում եր և այս անգամ իր  
հոր հետ: Պոլյանսկին լավ ուտում եր, խմում կարմիր գի-  
նին, պատմում եր Նիկիտինին, թե ինչպես նա մի անգամ  
ձմեռը պատերազմի ժամանակ ամբով գիշերը մինչև ծընկ-  
ները կանգնել եր ձահիճում. թշնամին մոտեցել եր այնպես,  
վոր չեր թույլատրվում վոչ խոսել, վոչ ծխել ցուրտ գիշեր  
եր, մութ, փչում եր ծակող քամին: Նիկիտինը լուսմ եր և

հայացքը շուռ տալիս Մանյուսյայի վրա: Վերջինս նայում  
եր նրա վրա անշարժորեն, չթարթելով աչքերը, կարծես թե  
ինչ վոր բանի վրա մտածում եր կամ տարված եր... Նրա  
համար դա և հաճելի յեր և՝ տանջալի:

«Ի՞նչու նա ինձ վրա այդպես նայում ե, — աշանջվում եր  
նա: — Դա անհարմար ե: Կարող են նկատել: Ինչպես յերի-  
տասարդ ե, ինչպես անփորձ»:

Հյուրերն սկսեցին հեռանալ կես գիշերին: Յերբ Նիկի-  
տինը դարբասից դուրս յեկավ, տան յերկրորդ հարկում բաց-  
վեց պատուհանը և յերեաց Մանյուսյան:

— Սերգեյ Վասիլեևիչ, — կանչեց նա:

— Ի՞նչ եք հրամայում:

— Ահա թե ինչ... — ասաց Մանյուսյան, ըստ յերեվույ-  
թին միտք անելով, թե ինչ ասի: — Ահա թե ինչ... Պոլյանս-  
կին խոստացավ մոտ որերս գալ իր լուսանկարչական գոր-  
ծիքով և մեզ բոլորիս նկարել Պետք և հավաքվել

— Լավ:

Մանյուսյան աչքից ծածկվեց, պատուհանը փակեց և  
տանը ինչ վոր մեկն իսկույն նկազեց գաշնամուրի վրա:

«Այ թե տուն ե, — մտածում եր Նիկիտինը՝ անցնելով  
փողոցի այն կողմը: Մի տուն, վորտեղ տնքում են միայն  
յեգիպտական աղավաղիները, այն ել նրա համար, վոր ուրիշ  
կերպ չեն կարող արտահայտել իրենց ուրախությունը»:

Բայց ուրախ եյին ապրում վոչ միայն Շելեստովմերը,  
Նիկիտինը յերկու հարյուր քայլ ել չեր անցել յերբ ուրիշ  
տանից լսվեցին գաշնամուրի հնչյունները: Անցավ ելի մի  
քիչ ժամանակ, և գորպասի մոտ տեսավ մի գեղջուկի, վորը  
նվազում եր բալալայի վրա: Այդում յերաժշտախումբը  
նվազում եր ուսւահան յերգերից փափուրի...»

Նիկիտինն ապրում եր Շելեստովմերից կես վերստ հեռու,

ութը սենյակից բաղկացած բնակարանում, վորը նա վարձել եր տարեկան յերեքնարյուր ոռոքով իր ընկերոջ, աշխարհագրության և պատմության ուսուցիչ հպոլիտ իպոլիտովիչի հետ միասին։ Այդ հպոլիտ իպոլիտովիչը վոչ այնքան ժեր մը մարդ եր, շեկ մորուքով, ցցաքիթ, կոպիտ և վոչ ինտելիգենտ դեմքով, ինչպես արհեստավոր, բայց բարեկեմ եր։ Յերբ Նիկիտինը տուն վերաբարձավ, նա նստել եր սեղանի մոտ և ուզում եր աշակերտների քարտեզները։ Նա աշխարհագրությունից ամենակարուրը և ամենաանհրաժեշտը համարում եր քարտեզների գծագրումը, իսկ պատմությունից — ժամանակագրություն իմանալը։ Ամբողջ գիշերներով նա նըստում եր և կապույտ մատիտով ուզում եր իր աշակերտների և աշակերտուհների քարտեզները կամ թե չե կազմում եր ժամանակագրական աղյուսակներ։

— Ինչ հիանալի յեղանակ ե այսոր, — ասաց Նիկիտինը ներս մտնելով նրա մոտ։ — Զարմանում եմ, թե ինչպես եք գուք կարողանում նստել սենյակում։

Իպոլիտ իպոլիտովիչը լաւկաց մարդ եր. նա կամ լոռում եր կամ խոսում միայն այն մասին, ինչ վոր վաղուց արդեն հայտնի եր բոլորին։ Այժմ նա այսպիս պատասխանեց.

— Այո, հիանալի յեղանակ ե։ Այժմ մայիս ե, շուտով կինի իսկական ամառ։ Իսկ ամառն այն չե, ինչ վոր ձմեռը։ Չմեռը պետք ե վառարան վառել, իսկ ամառն առանց վառարանի յել տաք ե։ Ամառը պատուհանները գիշերը բաց ես անում, բայց և այնպես տաք ե, իսկ ձմեռը կրկնակի շրջանակներ են դրվում, բայց և այնպես ցուրտ ե։

Նիկիտինը սեղանի մոտ նստեց մի բոպեյից վոչ ավել և ձանձրացավ։

— Բարի գիշեր, — ասաց նա բարձրանալով և հորանջելով։ — Ես ուզում եյի ձեզ պատմել մի ինչ վոր ոռմանտիկ

բան, վորն ինձ ե վերաբերում։ Բայց չե՞ վոր դուք աշխարհագրություն եք դասավանդում։ Զեզ հետսկում են խոսել սիրո մասին, իսկ գուք իսկույն հարցնում եք. «Յերբ տեղի ունեցավ Կակայի ճակատամարտը»։ Սառանան տանի ձեր ճակատամարտն ել, Զուկոտսկի հրվանդանն ել։

— Ինչու յեք բարեկանում։  
— Մարդ ստիպված նեղանում ե։

Յեզ նեղանալով, վոր նա դու չի բացատրվել Մանյուսյայի հետ և վոր նա հիմա վոչ վորի հետ չի կարող խոսել սիրո մասին, նա գնաց իր առանձնասենյակը և պառկեց զգրոցի վրա։ Առանձնասենյակում մութ եր և լուս Պառկերով և նայելով խափարի մեջ, չգիտես ինչու, Նիկիտինը, սկսեց մտածել այն մասին թե ի՞չ չլսես յերկու կամ յերեք տարի հետո նա վորեմ մի բանի համար կգնա Պետերբուրգ, ինչպես Մանյուսյան կուղեկցի նրան կայարան և լաց կլինի։ Պետերբուրգում նա կտանա նրանից յերկար նամակ, վորտեղ նա կխնդրի Նիկիտինին շուտ վերադառնալ տուն։ Յեզ Նիկիտինը կդրի նրան... Իր նամակը կսկսի այսպես՝ «Իմ սիրելի սկնիկ»...

— Հենց՝ իմ սիրելի մկնիկ, — ասաց նա և ծիծաղեց։ Նրան անհարմար եր ա, դպիս պառկած։ Նա ձեռքերը գրեց գլխի առակ և ձախ վոտք բարձրացրեց զգրոցի թիկունքին։ Այդպիս հարմար եր։ Մինչդեռ պատուհանն սկսեց զգալիութեն տժգունել, բակում կանչեցին քնաթաթախ աքլորները։ Նիկիտինը շարունակում եր մտածել այն մասին, թե ինչ պես նա կփերագառնա Պետերբուրգից, ինչպես նրան կդիմա վորի կայարանում Մանյուսյան և ուրախությունից ճշալով, վորի կայարանում մասն կպատճեն անբարեկ իսկական կամացուկ մասկություն անբարեկ իսկական կամացուկ բաց կամ ավելի լավ կլինի, յերբ նա խորա կը կնի նրա վիզը. Կամ ավելի լավ կլինի, յերբ նա խորա մասկություն անբարեկ կտա գիշերը, խորարարուհին կամացուկ բաց կամի դուռը, հետո թաթերի վրա կանցնի նաջարանը,

անաղմուկ կհանվի և կմտնի անկողին: Իսկ Մանյուսյան կարթնանա և — ուրախություն:

Ողը բոլորովին տժգունեց: Առանձնասենյակը և պատուշան այլևս չկային: Գարեջրի գործարանի հաշտում, այն գործարանի, վորի մոտով այսոր անցել եյին, նստած եր Մանյուսյան և ինչ վոր խոսում եր. հետո նա թևանցուկ արեց Նիկիտինին և նրա հետ գնաց քաղաքամերձ այգին: Այտեղ նա տեսավ կաղնիները և ագուաֆերի բները, վորոնք նման եյին գլխարկների: Մի բունը ճոճվում եր, նրա միջից դուրս նայեց Շերալդինը և կանչեց. «Դուք կարդացել եք Լեսինգին»:

Նիկիտինը ցնցվեց ամբողջ մարմով և աչքերը բացեց. բազմոցի առաջ կանգնած եր իպոլիտ իպոլիտովիչը և գլուխը հետ պահած կապում եր փողկապը:

— Վեր կացեք, ժամանակ և ծառայության գնալ, — ասաց նա: — Զգեստով չի կարելի քնել: Դրանից զգեստը փշանում ե, պետք ե քնել անկողնում շորերը հանած...

Յեվ նա սովորության համաձայն սկսեց յերկար և ընդհատումներով խոսել այն մասին, վորագաղուց արդեն հայտնի յեր բոլորին:

Նիկիտինի առաջին դասը ոռւսաց լեզու յեր յերկրորդ դասարանում: Յերբ նա ուղիղ ժամը իննին մտավ այդ դասարանը, այդտեղ սկ գրատախտակին կավիճով դրված եյին յերկու մեծ տառեր՝ Մ. Շ. Դա հավանական ենցանակում եր Մաշա Շելեստովա:

«Արդեն հոտն առել են, սրիկաներ... — մտածեց Նիկիտինը: — Յեվ վրտեղից նրանք այդ բոյորը դիտենա:

Գրականության յերկրորդ դասը հինգերորդ դասարանում եր: Յեվ այդտեղ ել գրատախտակին գրված եր Մ. Շ. Խոկ յերբ նա դասը վերջացնելով դուրս եր գալիս այդ դա-

սարանից, նրա հետեւ լովեց աղմուկ, կարծես թե թատրոնի վերնահարկից լիներ.

— Ուտա, Շելեստով:

Հազուստով քնելիս վլուխը ծանրացել եր, մարմինը տանջվում եր ծուլությունից: Աշակերտները, վոր ամեն որ սպասում եյին արձակուրդի, քննություններից առաջ վոչինչ չեցին անում, տանջվում եյին, ձանձրութից չարություն անում: Նիկիտինը նույնպես տանջվում եր, չեր նկատում չարությունները և շուտ շուտ մոտենում եր պատուհանին: Նա տեսնում եր փողոցը, վոր պայծառ կերպով լուսավորված եր արևից: Տների վրա թափանցիկ կապույտ յերկինքն եր, թոշունները, իսկ հեռվում, կանաչ այգիների ու տների հետեւմ, ընդարձակ, անսահման հեռավորություններ կապտավուն անտառներով, վազող գնացքի ծխով:

Ահա փողոցում, ակացիաների ստվերում, թափահարելով մտրակները, անցան յերկու ոփիցեր, սպիտակ զգեստներով: Ահա կառքով անցան մի խումբ հրեյաներ սպիտակ մորուքներով և կարտուզներով (գլխարկներով): Տան դաստիարակեցներով և գիրեհկտորի թոռնիկի հետ... Ուր վոր վաշունին զրունում ե գիրեհկտորի թոռնիկի հետ... Բայց ահա զերով անցավ Սոմք բակի յերկու շների հետ... Բայց ահա հասարակ գորշ շորով, կարմիր գուլպաներով, ձեռքին բռնած «Յեվրոպայի լրաբեր» ժուրնալը, անցավ Վատյան: Յերեկ նա քաղաքային գրադարանումն եր...

Իսկ դասերը դեռ շուտ չեն վերջանա — ժամի յերեքին: Իսկ դասերից հետո պետք ե վոչ տուն գնալ և վոչ ել Շելեստովների մոտ, այլ Վոլֆի մոտ — դասի: Այդ Վոլֆը, մի լեստովների մոտ գտայի: Այդ Վոլֆը, մի հարուստ հրեյա եր, վոր ընդունել եր լուսականությունը, իր յերեխաներին գիմնազիա չեր տալիս, այլ նրանց համար հրավիրում եր գիմնազիայի ուսուցիչներին և վճարում եր հինգական ուղղուի դասի համար...

«Ձանձրալի յե, ձանձրալի, ձանձրալի»:

Ժամի յերեքին նա զնաց վոլֆի մոտ և ինչպես իրեն թվաց, անվերջ նստեց նրա մոտ: Նրա մոտից հեռացավ ժամի 5-ին, իսկ յոթերրորդ ժամին պետք է զնար գիմնազիա, մանակավարժական խորհրդին — կազմելու բանավոր քննությունների ցուցակը 4-րդ և 6-րդ դասարանների համար:

Յերբ ուշ յերեկոյան նա գիմնազիայից գնում եր Շելիստովների մոտ, նրա սիրտը բարախում եր և յերեսն այրվում: Մի ամիս և մի շաբաթ սրանից առաջ, պատրաստվելով բացատրվել, նա պատրաստեց մի ամբողջ ճառ նախարանով և վերջարանով, իսկ այժմ նա չուներ վոչ մի պատրաստի խոռք, գլխում ամեն ինչ խառնվել եր, և նա միայն գիտեր, զոր հավահական և այսոր նա կրացատրվի և զոր ազելի յերկար սպասելու վոչ մի հնարավորություն չկա:

«Յես նրան այգին կհրավիրեմ, — մտածում եր նա, — մի քիչ կզրանեմ և կբացատրվեմ»:

Նախասենյակում վոչ վոք չկար. նա մտավ դահլիճ, հետո կյուրասենյակ... Այդտեղ նույնպես վոչ վոք չկար: Խովում եր թե ինչպես վերենում, յերկրորդ հարկում, Վառյան ինչ վոր մեկի հետ վիճում եր և ինչպես մանկասենյակում մըկրատով կտրատում եր վարձու կարողութիւն:

Տանը կար մի սենյակ, զորն յերեք անուն ուներ — փոքրիկ, անցողիկ և մութ: Այնտեղ կանգնած եր սի մեծ հին պահարան գեղորայքով, վառողով և վորսորդական պարագաներով: Այդտեղից յերկրորդ հարկը տանում եր մի նեղ փայտե փոքրիկ սաւութեք, զորի վրա միշտ կատուներ եյին քնում Այդտեղ կային գուներ. սեկը բացվուժ եր գեղիքի մանկասենյակը, մյուսը — հյուրասենյակը: Յերբ Նիկիտինն այդտեղ մտավ, վորպեսզի վեր բարձրանա, մանկասենյակի դուռը բացվեց և այնպես փակվեց, վոր դողացին թե սան

դուղքը և թե պահարանը: Ներս վազեց Մանյուսյան սեազույն շորը հագած, կապույտ կտորը ձեռքերին և չնկատելով Նիկիտինին, սլացավ գեղիքի սանդուխքը:

— Սպասեցեք... — կանգնեցրեց նրան Նիկիտինը: — Բարե ձեզ, Գողֆրուա... Թույլ տվեք...

Նրա շունչը կտրվում էր, չգիտեր, թե ինչ ասեր: Մի ձեռքով բռնից նրա ձեռքը, իսկ մյուս ձեռքով — կապույտ կտորը: Իսկ Մանյուսյան, հայտնի չե, վախեցել եր, թե զարմացել, նայում եր նրա վրա մեծ աչքերով:

— Թույլ տվեք... — շարունակեց Նիկիտինը, վախենալով, թե նա կհեռանա: — Յսս պետք և ձեզ բան ասեմ..: միայն թե... այստեղ անհարմար ե: Յես չեմ կարող, հնարավորություն չունեմ... հասկանեմ եք, Գողֆրուա, յես չեմ կարող... ահա և բոլորը...

Կապույտ կտրն ընկալ հատակին և Նիկիտինը բռնից Մանյուսյայի մյուս ձեռքը: Մանյուսյան գունաթափեց, շրթունքները շորեց, հետո հետ քաշվեց Նիկիտինի մոտից և կանգնեց պատի և պատուհանի միջև գտնված անկյունում:

— Ազնիվ խոսք, հավատացնում եմ ձեզ... — ասաց նա կամացուկ. — Մանյուսյա, աղնիվ խոսք...

Նա զլուխը հետ պահեց, իսկ Նիկիտինը համբուրեց նրա շրթունքները, և վորպեսզի այդ համբույրը յերկար շարունակվի, նա բռնեց Մանյուսյայի այտերը մատներով: Յեղ այնպես ստացվեց, զոր նա կանգնեց պահարանի և պատի միջև գտնված անկյունում, իսկ Մանյուսյան ձեռքերով փարեց նրա վզին և գլխով սեղմեց նրա ծնութիւն:

Հետո յերկուսն ել վազեցին այգին:

Շելիստովների այդին մեծ եր, չորս գեղայատին: Այնտեղ բուսել եյին մոտ քսան հին թղկի և լորի, կար մի յեւկնի, իսկ մնացած բոլորը կազմում եյին պտղատու ծառերը. կե-

ուսսի, խնձորենի, տանձենի, վայրի շագանակ, արծաթա-  
փայլ ձիթենի... կային և շատ ծաղիկներ:

Նիկիտինը և Մանյուսյան լուռ վազում եյին ծառուղի-  
ներով, ծիծաղում եյին, յերբեմն կցկտուր հարցեր եյին տա-  
լիս իրար, վորոնց չեյին պատախանում, իսկ այգու վե-  
րեռում լուսավորում եր կիսալուսինը, և գետնի վրա նա թույլ  
կերպով լուսավորում եր մութ կանաչը, վորի միջից բարձ-  
րացել եյին քնարեր կալաչներն ու լաւազարները, կարծես  
խնդրելով, վոր նրանց ել սեր բացատրեն:

Յերբ Նիկիտինը և Մանյուսյան տուն վերադարձան,  
ովհցերները ե որիորդներն արդեն հավաքվել եյին և պա-  
րում եյին մաղուրկա: Պոլյանսկին դարձյալ առաջնորդում  
եր պարի մեծ շրջանը բոլոր սենյակներով, դարձյալ պարե-  
րից հետո թուղթ խաղացին: Ընթիրքից առաջ, յերբ հյու-  
րերը դահլիճից գնացին սեղանատուն, Մանյուսյան Նիկի-  
տինի հետ մենակ մնալով հպեց նրան և ասաց.

— Դու ինքդ խոսիր հայրիկիս և Վառյայի հետ: Յես  
ամաչում եմ...

Ընթիրքից հետո նա խոսեց ծերունու հետ: Շելեստովը  
լսելով նրան, մտածեց և ասաց.

— Շատ շնորհակալ եմ ձեզանից այն պատվի համար,  
վոր գուք ցույց եք տալիս ինձ և աղջկանս, սակայն թույլ  
տվեք ինձ խոսել ձեզ հետ բարեկամաբար: Ձեզ հետ կիո-  
սեմ, վոչ վորպես հայր, այլ ինչպես ջենտելմենը ջենտե-  
մենի հետ: Ասացեք, ինդիւմ, ի՞նչ ցանկություն ե դա, այդ-  
պես վաղ ամուսնանալ: Միայն գեղջուկներն են այդպես  
շուտ ամուսնանում, բայց հայտնի յե, վոր դա գուհկություն  
ե, իսկ դուք ինչից դրդված այդպես եք անում: Ի՞նչ բավա-  
կանություն ե այդպիսի յերիտասարդ տարիներում կա-  
պանքներ հագնել:

— Յես իսկի յերիտասարդ չեմ, — վիրավորվեց Նիկի-  
տինը, — յես քսանյոթ տարեկան եմ:

— Հայրիկ, ծիծաղությունը յեկավ, — բզավեց մյուս սենյա-  
կից Վառյան:

Յեզ խոսակցությունն ընդհատվեց: Նիկիտինին տուն  
ուղեկցեցին Վառյան, Մանյուսյան և Պոլյանսկին: Յերբ մո-  
տեցան նրա բակի գոնակին, Վառյան ասաց.

— Ի՞նչ ու ձեր Միաբապությունը Միաբապութիչը վոչ մի տեղ  
չի յերևում: Թող մեզ մոտ գա:

Խորհրդավոր Բաղրամյանը Բաղրամյանը, յերբ Նիկիտինը  
նրա մոտ մտավ, նստել եր անկողնին և շարլարն եր հանում:

— Միք պառկի, սիրելիս, — ասաց նրան Նիկիտինը շնչա-  
կուր, — սպասեցեք, միք պառկի:

Խորհրդավոր Բաղրամյանը արագ հագավ շարլարը և հուզված  
հարցրեց:

— Ի՞նչ ե պատահել:

— Յես ամուսնանում եմ:

Նիկիտինը նստեց ընկերոջ կողքին և նայելով նրան  
զարմացած, կարծես թե զարմանում եր ի՞նքն իր վրա,  
ասաց.

— Յերեկայեցեք, ամուսնանում եմ, Մաշա Շելեստովայի  
հետ: Այսոր առաջարկություն արի:

— Ի՞նչ կա վոր, թվում ե, թե նա լավ աղջիկ ե, միայն  
յերիտասարդ ե:

— Այո, յերիտասարդ ե, — հառաչեց Նիկիտինը և մտած-  
կոտ վեր բարձրացրեց ուսերը, — շատ, շատ յերիտասարդ ե:

— Նա ինձ մոտ գիմնադիայում ե սովորել: Յես նրան  
զիտեմ: Աշխարհագրությունից վոչինչ, լավ եր, իսկ պատ-  
մությունից՝ վատ և դասարանում անուշագիր եր:

Զգիտես ինչու Նիկիտինը հանկարծ սկսեց խղճալ ընկե-

բոջը և ցանկացավ՝ ասել նրան վորևե քնքուշ, մխիթարաւ կան բան:

— Միրելիս, դժւք ինչու չեք ամուսնանում, — հարցրեց նա: Իպոլիտ Իպոլիտովիչ, ինչնու, որինակ Վառյայի հետ զուք չամուսնանաք: Նա հրաշալի, հիանալի աղջիկ ե: Ճիշտ ե, նա շատ ե սիրում վիճել, բայց նրա սիրտը... ինչպիսի սիրտ ե, նա քիչ առաջ ձեր մասին հարցրեց, ամուսնացեք, սիրելիս, այդ:

Նա հրաշալի դիտեր, վոր Վառյան չի ամուսնանա այդ ձանձրալի ցցաքիթ մարդու հետ, բայց համենայն դեպս համոզում ե նրան ամուսնանալ: Ինչո՞ւ:

— Ամուսնությունը լուրջ քայլ ե, — ասաց Իպոլիտ Իպոլիտովիչը մտածելով: — Պետք ե քննարկել ամեն ինչ, կշռել կշռագատել, իսկ այնպես չի կարելի: Յերբեք չի խանգարի, վոր մարդ խելամիտ լինի, մանավանդ ամուսնության գործում, յերբ մարդ դատարելով ամուրի լինել սկսում ե նոր կյանք:

Յեվ նա խոսեց այն մասին, ինչ վաղուց հայտնի յերուրին: Նիկիտինը դադարեց լսել նրան, ներողություն խընդրեց և գնաց իր սենյակը: Նա արագորեն հանեց շորերը և պառկեց, վորպեսզի ավելի շատ մտածի իր բախտի մասին, Մանյուսյայի մասին, ապագայի մասին, ժպտաց և հանկարծ հիշեց, վոր նա լեռ չի կարդացել լիսինգը:

«Պետք ե կարդալ... — մտածեց նա: — Ասենք ինչո՞ւ կարդամ, սատանան տանի»:

Յեվ իր բախտից նա հոգնած, իսկույն քնեց ու մինչև լույս ժպտում եր:

Նա յերազում լսում եր ձիերի սմբակների տոփյունը գերանե հատակին, յերազում տեսնում եր, թե ինչպես ախոռից դուրս բերին սկզբում սեաթույր «Դրաֆ Նուլինին», հետո սպիտակ «Վելիկանին», և հետո նրա քույր «Մայկա» ին:

## II.

«Յեկեղեցում շատ նեղվածք ու աղմուկ եր, և մի անգամ նույնիսկ ինչ վոր մեկը լըդավեց և ավագ յերեցը, վոր պսակում եր ինձ և Մանյուսյային, ակնոցների վրայով նայեց ամբոխին և խիստ ասաց.

— «Ման միք գա յեկեղեցում և միք աղմուկ բարձրացնի, այլ հանգիստ կանգնեցեք և աղոթեցեք: Աստծուց պետք և վախենալ»:

«Իմ խաչեղբարներն եյին իմ յերկու ընկերները, իսկ Մանյայինը — շտաբսկապիտան Պոլյանսկին և պորուչիկ Գերնետը: Յեկեղեցական խումբը յերգում եր հիանալի: Մոմերի ճարճատյունը, փայլը, տոնական զգեստները, ոփից ցերները, բազմաթիվ ուրախ ինքնարբավական դեմքեր և Մանյայի ինչ վոր առանձնահատուկ յեթերային տեսքը և ընդհանրապես ամբողջ զրությունն ու պսակի աղոթքի խոռքերը հուզում եյին ինձ արտասվելու չափ, լցնում եյին հանդիսավորությամբ: Յես մտածում եյի, թե ինչպես ծաղկել ե, ինչպես բանաստեղծորեն գեղեցիկ ե ընթանում իմ կյանքը վերջին ժամանակ: Յերկու տարի առաջ յես դեռ ուսանող եյի, ապրում եյի նեղինի փողոցի եժանագին համարներում, առանց փողի, առանց ազգականների և ինչպես ինձ թվում եր այն ժամանակ, առանց ապագայի: Իսկ այժմ յես զիմնազիայի ուսուցիչ եմ լավագույն նահանգական քաղաքներից մեկում, ապահովված, ինձ սիրում են, փայփայում: Ահա ինձ համար ե հավաքվել այժմ ամբողջը, — մտածում եյի յես, ինձ համար են վասվում յերեք ջաները, մոնչում ե ավագ սարկագաղը, ջանք են թափում յերգիչները և ինձ համար այնպես յերիտասարդ, այնպես նուրբ, այնպես ուրախ ե այդ յերիտասարդ եյակը, վորը քիչ հետո կոչվելու յե իմ կինը: Յես հիշեցի առաջին հան-

դիպումները, մեր ուղևորությունները քաղաքից դուրս, սիրո բացատրությունը և յեղանակը, վորը կարծես զիտմամբ ամբողջ ամառը հիանալի յեր Յել այն բախտավորությունը, վորը Նեղինի փողոցում յերբեմն պատկերանում եր ինձ հնարավոր միայն վեպերում ու պատմվածքներում, այժմ յես զգում եմ իրականում, կարծես ձեռքերիս մեջ եմ առել:

«Պակից հետո բարին անկանոն կերպով հավաքվեցին իմ և Մանյայի շուրջը և հայտնեցին իրենց անկեղծ բավականությունը և շնորհավորում եյին ու ցանկանում բախտավորություն Բրիգադային գեներ ալը մոտ յոթանասուն տարեկան ծերունի, շնորհավորեց միայն Մանյուսյային և ասաց նրան ծերացած, ճռճռուն ձայնով այնպես բարձր, վոր լովեց ամբողջ յեկեղեցում.

— «Հուսով եմ, սիրելիս, վոր հարսանիքից հետո ել դուք կմնաք այդպես վարդերես»:

«Ոֆիցերները, դիրեկտորը և բոլոր ուսուցիչները ժպտացին քաղաքավարությունից դրդված, և յես նույնպես իմ յերեսի վրա զգացի հաճելի, վոչ անկեղծ ժպիտ: Սիրելի Իզուիտ Խաղողավիչը, պատմության և աշխարհագրության ուսուցիչը, վոր միշտ խոսում ե բոլորին վաղուց հայտնի բաների մասին, ամուր սեղմեց իմ ձեռքը և ասաց զգացված.

«Մինչև այժմ դուք ամուսնացած չեյիք և ապրում եյիք մենակ, իսկ այժմ դուք ամուսնացած եք և ապլելու յերկուսով»:

«Յեկեղեցուց գնացինը յերկհարկանի չսվաղած տունը, վորն յես այժմ ոժիւա եմ ստանում: Բացի այդ տնից Մանյային տրվում ե քան հաղար ոռորի փող և ինչ վոր Միլիտոնվակի անապատը սպահակատնակով, վորաեղ, ինչպես ասում են, կան հավեր և բաղեր, վորոնք առանց հսկողու-

թյան վայրենանում յես: Յեկեղեցուց վերադառնալուց հետո յես պառկեցի, ձգվելով իմ առանձնասենյակում թուրքական բազմոցի վրա և ծխեցի: Ինձ համար յերբեք այդպես փափուկ և հարմար չեր յեղել կյանքում, իսկ այդ ժամանակ հյուրերն ուսա եյին կանչում և նախասենյակում վատ յերաժշտախումբը նվազում եր տուշ և ամեն հիմար բան: Վառյան, Մանյայի քույրը ներս վազեց առանձնասենյակս բաժակը ձեռքին, ինչ վոր տարորինակ լարված արտահայտությամբ, կարծես թե նրա բերանը լիքն եր ջրով: Նա ըստ յերեսույթին ուզում եր ավելի հեռու վազել բայց հանկարծ քրքչաց և բաժակը, շվակոցավ վլորվեց հատակի վրա: Մենք բոնեցինք նրա ձեռքերից և տարանք:

— «Վոչ վոք չի կարող հասկանալ, — փնթփնթում եր նա հետո ամենահեռու սենյակում, պառկոծ անկողնի վրա, դայակի մոտ: — Վոչ վոք, վոչ վոք, ասաված իմ, վոչ վոք չի կարող հասկանալ»:

«Բայց բոլորը հրաշալի հասկանում եյին, վոր նա մեծ և իր Մանյա քրոջնց չորս տարով և դեռևս ամուսնացած չե և իր նա լալիս եր վոչ թե նախանձից, այլ այն տիսուր գիշվոր նա լալիս եր վոչ թե նախանձից, վոր նրա ժամանակն անցնում ե և կարող տակցությունից, վոր նրա ժամանակն հանցնում ե և կարող ե պատահել նույնիսկ անցել ե: Ցերբ պարում եյին կաշրեւ և պատահել նույնիսկ անցել ե: Ցերբ պարում եյին կաշրեւ արդեն նա գահլիճում եր լացակումած, սաստիկ պուղբայած գեմքով և յես տեսա, թե ինչպես շտաբս-կապիտան Պողոս կամ այս նրա առաջ պահել եր պաղպաղակի ափսեն, իսկ լյանսկին նրա առաջ պահել եր պաղպաղակի ափսեն, իսկ նա ուսում եր գլանով...

«Արդեն առավոտվա ժամի վեցն ե: Յես վերցրի հուշատետրս, վորպեսզի նկարագրեմ իմ լրիվ, բազմատեսակ բախտավորությունը և մտածում եյի, թե կզրեմ վեց թերթ և տավորությունը և մտածում եյի, թե կզրեմ վեց թերթ և վաղը կկարգամ Մանյային: Բայց տարորինակ բան, իմ գլուխում ամեն ինչ շփոթեց, սկսվեց խառնվել ինչպես յերազ:

և յիս սուբր կերպով հիշում եմ միայն Վառյայի հետ պատա . հած դեպքը և ուզում եմ գրել՝ խեղճ Վառյաւ Հենց այսպես նստել ու գրել՝ խեղճ Վառյաւ . Ի դեպ՝ ծառերն աղմկեցին, անձրեւ ե գալու . ագուաթերը կուավեցին և չգիտես ինչու իմ Մանյայի գեմքը, վոր հենց նոր քնեց, այդպես տխուր ե»:

Հետո Նիկիտինը յերկար ժամանակ ձեռք չեր տալիս հուշատերին: Ոգոստոսի առաջին որերն սկսվեցին նրա վերաքննություններն ու ընդունելության քննությունները, իսկ վերափոխման տոնից հետո — դասարանական պարագմունքները: Սովորաբար, առավոտյա ժամի ինսին նա գնում եր ծառայության, իսկ ժամի տասին սկսում եր կարոտել Մանյային ու իր նոր տունը և նայում եր ժամացւյցին: Ստորին դասարաններում նա տղաներից վորեւե մնկին ստիգում եր թելադրել և քանի գեռ յերեխանները դրում եյին, նստում եր պատուհանի վրա և փակ աչքերով յերազում. արդյոք ապագայի մասին եր յերազում, թե անցյալի մասին հիշում, այդ բոլորը միատեսակ հրաշալի յեր ստացվում և նմանվում եր հեքյաթի: Բարձր դասարաններում բարձրաձայն կարդում եյին Գոգոլը, կամ Պուշկինի արձակագրությունները և դանրա քունը բերում եր, յերևակայության մեջ պատկերացվում եյին մարդիկ, ծառեր, դաշտեր, հեծվորներ և նա խոսում եր հառաջելով, կարծես թե հիանում եր հեղինակով.

— Ինչ լավ ե:

Մեծ գասամիջոցին Մանյան ուղարկում եր նրան նախաձաշ ձյունի պես սպիտակ անձինոցիկում և նա ուտում եր նախաճաշը դանդաղորեն, դադարներով, վորապեսի բավականությունը յերկար տեսլեր, իսկ իպոլիտ իպոլիտովիչը, վոր սովորաբար նախաճաշին միայն բուլիի յեր ուտում, նա-

յում եր նրա վրա հարգանքով և նախանձով ու ասում վորեն մի ծանոթ բան՝ մոտովորապես հետեւլը.

— Առանց սնունդի մարդիկ չեն կարող գոյություն ունենալ:

Նիկիտինը զիմնազիւյց գնում եր մասնավոր դասերի և յերբ վերջապես ժամի վերջին վերադառնում եր տուն, ապա զգում եր ուրախություն և հուզմունք, կարծես թե մի ամբողջ տարի տանը չեր յեղել: Նա սանդուխքներով ներս եր վազում, շնչակտուր գտնում եր Մանյային, փաթաթվում եր նրան, համբուրում և յերգվում եր, վոր սիրում ե նրան, առանց նրան չի կարող ապրել հավատացնում եր, վոր սաստիկ կարոտել ե և յերկյուղով հարցնում եր նրան, թե արդյոք առհղջ ե նա և ինչո՞ւ նրա գեմքն այդպես տխուր ե: Հետո յերկուսով ճաշում եյին: Ճաշից հետո պառկում եր նա առանձնասենյակում դիվանի վրա և ծխում, իսկ Մանյան, նստում եր մոտ և պատմում կիսաձայն:

Այժմ նրա համար ամենայերջանիկ որերը կիրակիներն ու տոններն եյին, յերբ նա առավոտից մինչև յերեկո մնում եր տանը: Այդ որերին նա մասնակցում եր պարզ, բայց արտասավոր հաճելի կյանքին, վորը հիշեցնում եր նրան հովական պարզ կյանքը: Նա անդադար դիտում եր, թե ինչպես իր խելամիտ և դրական Մանյան կառուցում եր բունը և ինքը նույնպես ցանկանալով ցույց տալ, վոր ավելորդ չե տան մեջ, կատարում եր վորեւե անոգուտ բան, որինակ՝ դուրս եր բերում մարագից կառքը և ամեն կողմից նայում վրան, Մանյուսյան յերեք կովերից սարքեց իսկական կան կաթնային տնտեսություն և նրա մառանում կային կաթով և թթվասերով լցված շատ կծուճներ, և այդ բոլորը նա պահում եր յուղի համար: Յերբեմն կատակի համար Նիկիտինը նրանից ինքը ուտում եր մի բաժակ կաթ: Նա վախե-

նում եր, քանի վոր դա անկարգություն եր, իսկ Նիկիտինը ծիծաղելով փաթաթվում եր նրան և ասում.

— Դե, դե, կատակ արի, հոգյակս, կատակ արի:

Կամ թե ծաղրում եր նրա մանրակրկիտ լինելը, յերբ, որինակ, Մանյան պահարանում գտնելով յերշիկի կամ պանրի քարի պես չոր կտորը, ասում եր հանդիսավոր կերպով.

— Սա կուտեն խոհանոցում:

Նիկիտինը նկատողություն եր անում նրան, թե այդպիսի փոքր կտորը պետք կտա միայն մկան թակարդում, իսկ նա սկսում եր ջերմորեն ապացուցել, վոր տղամարդիկ վոչինչ չեն հասկանում տնտեսությունից և վոր աղախնին վոչ մէր բանով չես կարող զարմացնել, թեկուզ նրա համար խոհանոց ուղարկես յերեք փութ նախաձաշ։ Յեվ Նիկիտինը համաձայնում եր ու հիացմունքով ի սթաթվում նրան։ Այն, ինչ վոր Մանյայի խոսքերում ճիշտ եր, նրան թվում եր արտասավոր, ճրաշալի, իսկ այն, ինչ վոր դեմ եր նրա համոզմունքներին, նրա կարծիքով պարզամիտ եր և սրտառուչ։

Յերեմին Նիկիտինը փիխոփայական տրտմադրության մեջ եր ընկնում և սկսում եր դատել վորեն վերացական նյութի մասին, իսկ Մանյան լսում եր և հետաքրքրությամբ նայում նրա դեմքին։

— Յես անսահման բախտավոր եմ քեզ հետ, իմ ուրախություն, — ասում եր Նիկիտինը խաղալով նրա մատիկների հետ, կամ արձակելով և կրկին հյուսելով նրա մազերը։ — Բայց իմ այդ բախտավորության վրա յես չեմ նայում այնպես, կարծես թե դա պատճական լինի, յերկնքից ընկած։ Այդ բախտավորությունը միանգամայն ընական, հետեղուական, տրամաբանորեն ճիշտ յերեկույթ ե։ Յես հավատում եմ, վոր մարդ հանդիսանում ե իր յերջանկության ստեղծիչը և այժմ յես վերցնում եմ այն, ինչ ինքս եմ ստեղծել։ Այս

ասում եմ առանց այլ կայլության։ Այս բախտավորությունը յես ինքս եմ ստեղծել և իրավամբ տիրապետում եմ նրան։ Քեզ հայտնի ե իմ անցյալը։ Վորություն, չքափորություն, դժբախտ մանկություն, վշտակից պատանեկություն, այդ բոլորը պայքարի ճանապարհ ե, վորը յես հարթում ելի յերջանկության հասնելու համար...

Հոկտեմբերին գիմնազիան մեծ կորուստ ունեցավ։ Իպոլիտ Իպոլիտովիչը հիվանդացավ գլխի կարմիր քամիով և մեռավ։ Մահից առաջ վերջին որը նա անգիտակից գրության մեջ եր և զառանցում եր, բայց զառանցանքի մեջ ել ասում եր միայն այն, ինչ հայտնի յեր բոլորին։

— Վորդան թափվում ե կասպից ծովը... Զիերն ուտում են վարօակ և խոտ...։

Նըս թաղման որը գիմնազիայում պարապմունքներ չեզան, ընկերներն ու աշակերտները տանում եյին դադաղն ու նրա կափարիչը և գիմնազիայի յերգեցիկ խումբն ամբողջ ձանապահին մինչև գերեզմանոց յերգում եր։ Շուրջ ասուցավածք։ Հուղարկավորությանը մասնակցում եյին յերեք քաշանական, յերկու սարկավագ, ամբողջ արական գիմնազիան և յերկեցական խումբը հանդիսավոր զգեստներով։ Յեվ անյերկեցական նայելով հանդիսավոր թաղմանը, խաչակինքում եյին և ասում.

— Ասաված տա, վոր բոլորն այդպես մեռնեն։

Գերեզմանոցից տուն վերադառնալով հուշված, Նիկիտինը սեղանի մեջ գտավ իր հուշատետրը և գրեց։

«Այժմ դերեզման իջեցրինք իպոլիտ Իպոլիտովիչ Ռիժիցուն։

«Հանգիստ նրա աճյունին, համեստ աշխատող։ Մանյան, Վայոյան և բոլոր կանայք, վորոնք թաղմանը ներկա եյին գուցե նրա համար, վոր գիտեյին, թե այդ անհետաքրքիր

Ճնշված մարդուն յերբեք չի սիրել վոչ մի կին: Ընկերոջս գերեզմանի վար յես ուղում եյի ջերմ խոսք ասել, բայց իսձ նախազգուշացրին, թե կարող է դիրեկտորին դուր չգալ, քանի վոր նա չեր սիրում հանգուցյալին: Հարսանիքից հետո կարծեմ առաջին որն ե, յերբ հոգեպես տանջվում եմ...»

Այնուհետև ամբողջ ուսումնական տարվա ընթացքում վոչ մի առանձին դեպք չպատահեց:

Ջմբոր մեղմ եր, առանց սառնամանիքների, խոսավ ձյունով: Մկրասության տոնի նախորյակին, որինակ, ամբողջ դիշեր քամին տիսուր վոռնում եր աշնան յեղանակի պես և կտուրներից ջուրը թափվում եր, իսկ առավոտյան, ջրորհնեքի ժամանակ, վոստիկանությունը վոչ վոքի չթողեց գետի վրա, վորովհետև ասում եյին, թե սառուցն ուռել ե և սեացել բայց չնայած վատ յեղանակին, նիկիտինմ ապրում եր նույնպես յերջանիկ, ինչպես ամառը, նույնիսկ ավելացել եր մի ավելորդ զվարճանք՝ նա սովորել եր թղթախաղ: Միայն մի բան յերբեմն հուզում և բարկացնում եր նրան և կարծես թե խանգարում եր միանգամայն յերջանիկ լինել դա կատուներն ու շներն եյին, վորոնց նա ոժիտ եր ստացել: Սենյակներում միշտ հոտ եր գալիս, ինչպես գազանցում, հատկապես առավոտները, և այդ հոտը վոչ մի կերպ չեր կարելի վերացնել. Կատուները հաճախ կովում եյին շների հետ: Զար Մուշկային որը տասն անգամ կերակրում եյին, նա առաջվա պես նիկիտինի հետ չեր հաշտվում և հաջում եր նրա վրա...»

— Որոս... հափ-հափ-հափ...

Մի անգամ մեծ պասի կես գիշերին նա տուն եր վերագառնում ակմբից, վորտեղ թուղթ եր խաղում: Անձրւ եր գալիս, մութ եր և ցեխ: Նիկիտինը հոգու անհաճո զգացմունք եր ապրում և չեր կարող հասկանալ, թե ինչից ե այդ.

արդյոք նրանից ե, վոր նա ակմբում տարվեց տասներկու ոռւբի, թե նրանից, վոր խաղակիցներից մեկը, յերբ հաշիվ եյին տիսնում, ասաց, թե նիկիտինի փողին չափ չկա, ըստ յերկույթին ակնարկելով ոժիտը: Տասներկու ոռւբին ափսոս չեր և խաղակցի խոսքերում վիրավորական վոչինչ չկար, բայց և այնպես անհաճելի յեր: Նույն իսկ տուն գնալ չեր ուղում:

— Ֆու, ինչպես վատ ե, — ասաց նա կանգ առնելով լապտերի մոտ:

Նա միտք արեց, թե տասներկու ոռւբլին ցավալի չե այն պատճառով, վոր նա ձրի յե ստացել: Յեթե նա աշխատավոր լիներ, նա կիմանար ոմեն մի կուեկի արժեքը և անտարբեր չեր լինի տանելուն և տարվելուն: Յեվ հենց ամբողջ յերջանկությունը, դատում եր նա, ձեռք ե բերել ձրիաբար, զուր տեղը և ըստ եյության նրա համար այնպիսի մի ճոխություն ե, ինչպես գեղն առողջի համար: Յեթե նա մարդկանց ահազին մեծամասնության պես պայքարեր գոյության համար, յեթե նրա մեջքն ու կուրծքը ցավեր աշխատանքից, ապա ընթրիքը, տաք, հարմար բնակարանը և ընտանեկան յերջանկությունը կիխնեյին նրա կյանքի պահանջը, հատուցումը և զարդարանքը: Իսկ այժմ այդ բոլորն ինչ վոր տարոր ինակ, անորոշ նշանակություն ուներ:

— Ֆու, ինչպես վատ ե, — կրկնեց նա՝ շատ լավ հասկանալով, վոր այդ դատողություններն ինքնին արդեն վատ նշան են:

Յերբ նա տուն յեկավ, Մանյան անկողնումն եր, նա համբիսա շնչում եր և ժպտում, ըստ յերկույթին քնել եր մեծ բավականությամբ: Նրա մոտ կծկված պառկել եր սպիտակ կատուն և մոռում եր:

Մինչև նիկիտինը վառում եր մոմը և ծխում, Մանյան արթնացավ և պահաբար խմեց մի բաժակ ջուր:

— Շատ մարմելագ իմ կերել, — ասաց նա և ծիծաղեց: —  
Դու մերոնց մոտ յեղանք, — հարցրեց նա և լոեց:  
— Վոչ, չեմ յեղել:

Նիկիտինն արդեն գիտեր, վոր շտաբս-կապիտան Պոլյանս  
կին, վորին վերջին ժամանակ ուժեղ կերպով նկատի ուներ  
վառյան, նշանակվել ե արևմտյան նահանգներից մեկում ծա-  
ռայելու և քաղաքում արդին հրաժեշտի այցելություններ  
եր անում, դրա համար ել աներոջ տանը ձանձրալի յեր:

— Յերեկոյան յեկավ Վառյան, — ասաց Մանյան նստե-  
լով: — Նա վոչինչ չսասաց, բայց դեմքից հայտնի յեր, թե ինչ-  
պես ծանր ե խեղճ քրոջս համար: Տանել չեմ կարող Պոլյանս-  
կուն: Հաստ, կախ ընկած, իսկ յերբ քայլում ե կամ պարում,  
այտերը ցնցվում են... Իմ ճաշակով չե, բայց և այնպես յես  
համարել եմ նրան կարգին մարդ:

— Յես ճիմա ել նրան համարում եմ կարգին մարդ:  
— Իսկ ինչո՞ւ նա այդպես վատ վարվեց Վառյայի հետ:  
— Ինչո՞ւ վատ, — հարցրեց Նիկիտինը զգալով, վոր սկը-  
սում և դրսով սպիտակ կատվի դեմ, վորը ձգվեց, մեջքը  
ցցելով: Ինչքան ինձ հայտնի յե, նա առաջարկություն չի  
արել և վոչ մի խոստում չի տվել:

— Իսկ ինչո՞ւ նա հաճախ լինում եր մեր տանը: Յեթէ  
մտադիր չեր ամուսնանալու, թող չհաճախեր:

Նիկիտինը հանգցրեց մոմը և պառկեց, բայց չեր ուզում  
վոչ քննել վոչ պառկել: Նրան թվում եր, թե իր գլուխն  
ահազին ե և դատարկ, ինչպես ամբար և այնտեղ թափա-  
սում են նոր, ինչ վոր առանձին մաքեր յերկար ստվերների  
պես: Նա մտածում եր այն մասին, վոր բացի լամպի մեղմ  
լույսից, վորը ժամանակակի աշխարհից, վորտեղ այնպես

վոր կա նաև ուրիշ աշխարհ... Յեվ նա հանկարծ սաստիկ,  
տանջվելու չափ ցանկացավ հեռանալ այդ ուրիշ աշխարհը,  
վորպեսզի ինքն աշխատի մի վորեն գործարանում կամ վորեն  
մեծ արհեստանոցում, խոսել ամբիոնից, ստեղծագործել, տպա-  
գրել հոգնել, տանջվել... Նա ցանկացավ մի այնպիսի բան,  
վորը համակեր նրան ինքնամոռացության չափ, անտարբե-  
րության չափ դեպի անձնական բախտավորությունը, վորի  
զգացումներն այնքան միակերպ են: Յեվ յերեսակայության  
մեջ հանկարծ կենդանացավ ածիւված Շերալդինը և սարսափով  
ասաց.

— Դուք չեք կարդացել նույնիսկ Լեսինգը: Ինչքան հետ  
եք մնացել, աստված իմ, ինչպես ընկել եք:

Մանյան նորից սկսեց ջուր խմել: Նիկիտինը նայեց նրա  
վզին, լի ուսերին և կրծքին և հիշեց այն խոսքը, վորը մի  
ժամանակ յեկեցում ասել եր բրիգադային գեներալ՝  
«վարդերես»:

— Վարդերես. — Փնթվինթաց նա և ծիծաղեց: Վորպես  
նրան պատասխան մահակալի տակ հաջեց քնաթաթախ  
Մուշկան:

— Ո՞ոո... հափ-հափ-հափ...  
Ծանր չարացածությունը մուրճի պես հարվածում եր  
նրա հոգում և նա ուզեց վորեն կոպիտքան ասել Մանյային  
և նույն իսկ վեր ցատկել և խփել նրան: Սիրտն սկսեց բա-  
րախել:

— Այդպես ուրեմն, — հարցրեց նա, զսպելով իրեն. —  
յեթե յես գալիս եյի ձեզ մոտ, ձեր տանը, անպայման  
պետք ե ամուսնանայի՞ք քեզ հետ:

— Իհարկե: Դու ինքդ այդ բանը շատ լավ հասկա-  
նում ես:

— Հրաշալի յե:

Յեվ մի բոպեյից հետո գարձյալ կը կնեց.

— Հիանալի յե:

Ավելորդ բան չասելու և սիրտը հանգստացնելու համար Նիկիտինը գնաց իր առանձնասենյակը և պառկեց դիվանի վրա առանց բարձի, հետո պառկեց հատակին, գորգի վրա:

«Ի՞նչ հիմարություն, — հանգստացնում եր նա ինքն իրեն: — Դու մանկավարժ ես, աշխատում ես ամենաաղնիվ ասպարիզում... ուրիշ ի՞նչ աշխարհ է հարկավոր քեզ: Ի՞նչ անհեթեթություն»:

Բայց իսկույն նա համոզված ասում եր իրեն, թե ինքը յերբեք մանկավարժ չե, այլ չինովակի ե, այնպես անշորհք և անդեմ, ինչպես այն չեխը, հունարենի դաստուն. նա յերբեք չի ունիցել ուսուցչական գործունեյության կոչում: Մանկավարժության հետ նա ծանոթ չի յեղել և նրանով յերբեք չի հետաքրքրվել. յերեխաների հետ վարփել չի կարող. իր դասավանդածի նշանակությունն անհայտ եր նրան և կարող ե պատահել նա սովորեցնում եր այն բանը, ինչ հարկավոր չեր: Հանգուցյալ իպոլիտ իպոլիտովիչն անկեղծորեն բռութ եր, և բոլոր ընկերներն ու աշակերտները գիտեյին, թե ով ե նա և ինչ կարելի յե նրանից սպասել իսկ ինքը, Նիկիտինը, ինչպես այն չեխը, կարողանում ե թագցընել իր բթամտությունը և ճարպիկորեն խարում ե բոլորին, ցույց տալով, վոր փառք աստծո, ամեն. ինչ լավ ե գնում: Այդ նոր մտքերը վախեցնում եյին Նիկիտինին, նա հրաժարվում եր նրանցից, համարում եր նրանք հիմար և հավատում եր, վոր այդ բոլորը նյարդերից ե, վոր նա ինքը ծիծաղելու յե իր վրա:

Յեվ իրոք, առավտայան նա ծիծաղում եր իր ջղայնության վրա և իրեն «կնիկ» եր համարում, բայց նրա համար արդեն պարզ եր, վոր հանդիսուը կորած ե, հավանական և

լնդմիշտ, և վոր յերկնարկանի չսվաղած տանը նրա համար այլևս անհնար ե յերջանկություն: Նա գուշակում եր, վոր յեղաղանքը ցամաքել ե և արդեն սկսվում եր նոր, ջղային, գիտակցական կյանք, վորը հաշտ չեր հանգստության և անձնական յերջանկության հետ:

Հետեւյալ որը, կիրակի, նա գիմնազիայի յեկեղեցում եր, և տեսնից զիրեկտորի ու ընկերների հետ: Նրան թվում եր, թե նրանք բոլորն զբաղված են միայն նրանով, վոր խնամքով թագյունում են իրենց տպիտությունն ու անբավականությունը կյանքից, և նա ինքը, վորպեսզի ցույց չտա նրանց իր անհանգստությունը, հաճությամբ ժպատում եր և խոսում դատարկ բաների մասին: Հետո նա գնաց կայարան և այնտեղ տեսավ, թե ինչպես փոստային գնացքը յեկավ ու մեկնեց, և նրան հաճելի յեր, վոր ինքը մենակ ե և հարկավոր չե, վոր նա վորեւ մեկի հետ խոսի:

Տունը նա գտավ աներոջը և վառյային, վորոնք յեկել եյին նրա մոտ ճաշելու: Վառյան արտասվալի աչքերով եր և գանգատվում եր, վոր գլուխը ցավում ե, իսկ Նելեստովը սաստիկ շատ եր ուսում և խոսում եր այն մասին, թե ինչպես այժմյան յերիտասարդներն անհուսալի յեն և ինչպիս քիչ ջենտելմենություն ունեն:

Դա գոենկություն ե, — ասում եր նա: — Յես ուզդակի նրան այդպես կամեմ գա գոենկություն ե, վողորմած տեր:

Նիկիտինը հաճույքով ժմատում եր և ողնում եր Մանյային հյուրասիրելու հյուրերին, բայց ճաշից հետո գնաց իր առանձնասենյակը և փակվեց:

Մարտ ամսվա արեկը պայծառորեն լուսավորում եր և պատռհանի ապակիների միջև նրա ջերմ ճառագայթներն ընկնում եյին սեղանի վրա: Դեռ ամսի քսանն եր, բայց արդեն ուղեղորդում եյին կառքերով, իսկ այգիներում աղ-

մըկում եյին սարյակները։ Կարծես թե Մանյուսյան հենց  
այժմ կմտնի, մի ձեռքով կփարի նրա վզին և կասի, վոր  
ձիերը կամ կառքը պատրաստել են և կհարցնի՝ ինչ հագնի,  
վորպեսզի չմրսի։ Սկսվում եր մի այնպիսի հրաշալի գա-  
րուն, ինչպես անցյալ տարի, և խոստանում եր նույն ուրա-  
խությունները... Բայց Նիկիտինը մտածում եր այն մասին,  
թե լավ կլիներ այժմ արձակուրդ ստանալ և գնալ Մոսկվա  
և այնտեղ կանգ առնել Նեղլինի փողոցում ծանոթ համար-  
ներում։ Հարեւան սենյակում սուրճ եյին խմում և խոսում  
եյին շտաբս-կապիտան Պոլյանսկու մասին, իսկ նա աշխա-  
տում եր չլսել և գրում եր իր հուշատետրում հետեւյալը.  
«Վորտեղ եմ յես, տեր ասաված, ինձ ըրջապատում ե գոեհ-  
կությունը։ Զանձրալի, չնչին մարդիկ, թթվասերի կճուծ-  
ները, կաթի ամանները, տարականները, հիմար կանայք...  
Զկա ավելի սարսափելի, վիրափորական, տաղտուկ բան,  
քան գոեհկությունը։ Պետք ե փախչել այս տեղից, փախչել  
հենց այսոր, հակառակ դեպքում յես կգժվեմ»։



Ответ. редактор Г. А. Потенц  
Пом. техред. Д. М. Джинибалаин

Издание №599/4859 — Х. Сдано в набор 29 января 1936 г. Подписано в печать 19 февраля 1936 г. Формат — Б6 (125x176), Обем 1,625. л. л. (58,562 зн. в. 1 б. л.) Тираж 1500. Уполномочил №00-11452 Заказ. №512

Типография им. Стакки 1902 г. в гор. Ростове на-Дону

«Ազգային գրադարան



NL0316429

Գմբ  
Цена 35 ԿՈՊ.  
ԿՈՊ.

Հ 3677

12.644

На армянском языке

А. П. ЧЕХОВ

УЧИТЕЛЬ СЛОВЕСНОСТИ

Ա Յ Ո Վ Ո - Չ Ե Ր Ն Ո Մ Ո Ր Ծ Ո Ւ Ր Ը  
Կ Ր Ա Ե Վ Ո Ւ Ր Ը Ե Վ Ո Ւ Ր Ը  
Ռ Ո Տ Ո Վ Ո Ւ Ր Ը Ե Վ Ո Ւ Ր Ը  
Բ Ո Ւ Ր Ը Ե Վ Ո Ւ Ր Ը Ե Վ Ո Ւ Ր Ը  
Բ Ո Ւ Ր Ը Ե Վ Ո Ւ Ր Ը Ե Վ Ո Ւ Ր Ը

Ա Յ Ո Վ Ո - Չ Ե Ր Ն Ո Մ Ո Ր Ծ Ո Ւ Ր Ը  
Կ Ր Ա Ե Վ Ո Ւ Ր Ը Ե Վ Ո Ւ Ր Ը  
Ռ Ո Տ Ո Վ Ո Ւ Ր Ը Ե Վ Ո Ւ Ր Ը  
Բ Ո Ւ Ր Ը Ե Վ Ո Ւ Ր Ը Ե Վ Ո Ւ Ր Ը  
Բ Ո Ւ Ր Ը Ե Վ Ո Ւ Ր Ը Ե Վ Ո Ւ Ր Ը